



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1899

82
F-90



8589

XVI, 2.

12

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

+

07 JUN 2005

16 OCT 2009

82
F-90
uyp

2-րդ յաւելուած «Մուրնի»

Բ Ր Ե Տ Հ Ա Ր Տ

Ի Ն Ն Ը Ս ՈՒ Ն Ե Ի ՈՒ Թ Ը Տ Ա Ր Ի

Ա Ռ Ա Ջ

(Պ Ա Տ Մ ՈՒ Ա Ե Գ)

Թարգմ. ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ



1001
1304

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան Վրաց Հրատ. Ընկերության || Типография Грузинск. Изд. Т—ва
1902

06.03.2013

1899

Дозволено цензурою, Тифлисъ, 21 ноября 1902 года.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ատլանտեան ովկիանոսի այն կողմը զարգացել է մի ինքնորինակ կեանք, որ իր հիմնական գծերով տարբերուած է եւրոպական կեանքից: Այնտեղ նոր հայրենիք գտան Հին Աշխարհի ամեն տեսակ դժգոհ տարրեր՝ և՛ նրանք, որոնք տանը չէին կարող հաշտուել իրանց նիւթական վիճակի հետ ու որոնում էին ընդարձակ հողեր և հարստութիւններ, և՛ նրանք, որոնց խեղճում էին քաղաքական և հասարակական պայմանները, և՛ նրանք, որոնց հալածում էին կրօնական հայեացքների համար,—բոլորն էլ ուժեղ, անընկճելի կաւքի տէր մարդիկ: Կուսական հողի վրայ, ազատ ամեն աւանդական կապերից, նրանք ուզածի պէս, իդէալին հետևելով, կազմակերպեցին իրանց ընտանեկան և հասարակական կեանքը և առաջացրին այն անհատական, ձեռնարկու, ինքնազուխ բնաւորութիւնները, որոնք յափշտակում էին եւրոպացու երեւակայութիւնը Մայն Ռիզի և Ֆենիմօր Կուպերի գրուածքների մէջ: Բայց այս արկածագիր վիպասանների հերոսները մի մի չափազանցութիւն են թէեւ հէնց այդ իսկ չափազանցութեան մէջ գրաւիչ: Միայն մի քանի ամիս սրանից առաջ վախճանուած ամերիկացի հեղինակ Բրեա Հարտն էր (ծն. 1839) առաջինը, որը մեծ և փոքր վէպերի ու մանրանկարների մէջ պատկերացրեց նոր Աշխարհի (Միացեալ Նահանգների) բնաւորութիւնները այնպէս, ինչպէս որ նրանք կան:

ստեղծագործական խորին ճշտութեամբ (ուղիղ է, նա էլ մեծ նշանակութիւն է տալիս իր գրուածքների մէջ արկածներին և պատահականութեանը, բայց ճշմարտութիւնը նրա համար ամենից վեր է: Պարզ է, թէ ինչու նրա մօտ գտնուում ենք ոչ միայն Հիւսիսային Ամերիկայի, մանաւանդ Կալիֆօրնիայի, անօրինակ բնութեան շքեղ նկարագրութիւններ, այլ և ամբողջացրած բնաւորութիւններ և նուրբ հոգեբանական վերլուծութիւններ: Իբրև ամերիկացի, նա չէր կարող կանգ չ'առնել և այն մեծ անձնաւորութեան վրայ, որը ամբողջովին, իր բոլոր առաւելութիւններով, մարմնացնում էր ամերիկական բնաւորութեան լաւագոյն կողմերը և որի մէջ անհատականութիւնը զարգացած էր աւելի, քան թէ որեւէ մէկ ուրիշի մէջ: Այդ խոփու դէմքը Վաշինգտօնն է՝ «Միացեալ Նահանգների ստեղծողը»: Բրեւտ Հարտը իր ունեցած անհուն ակնածանքը դէպի այդ անձնաւորութիւնը ցոյց է տալիս նոյնպէս և «Իննըսուն և ութը տարի առաջ» վէպիկի մէջ:

Այնպէս լեռների և Ատլանտեան օվկիանոսի մէջտեղ, խոր գետերով կտրուած, պողաւէտ երկրում, արդէն XVI դարի վերջերքից, անգլիացիք հիմնել էին մի շարք գաղութներ, թուով տասներեք, որոնցից ամեն մէկը բաժանուում էր կոմսութիւնների, իսկ կոմսութիւնները համայնքների: Ամեն մի համայնք անկախ էր կառավարուում և ընդարձակ տեղական ազատութիւն էր վայելում: Բարձրագոյն իշխանութիւնը պատկանում էր կոմսութեան պատգամաւորներին, որոնք կառավարում էին երկիրը կայսերական նահանգապետի հսկողութեան ներքոյ: Գաղութների նիւթական փիճակը սկսեց արագ բարւոյրուել մանաւանդ XVIII դարում: Միաժամանակ ծաղկեցին գիտութիւններն ու իրաւաբանութիւնը, բազմապիսի գարոյներն, և սկզբնական ուսումը զառաւ գրեթէ պարտադիր: Առաջադիմութեանը խանգարում էին սակայն մի քանի հանգամանքներ, օրինակ, կանայք շատ սակաւթիւ էին և մի քանի գաղթականներ 75 դրոլար կամ 150 ֆունտ ծխախոտ էին ուղարկում Եւրոպա այնտեղից «մաքուր և անարատ» կին բերելու համար: Միւս կողմից, Անգլիան, իր արդիւնագործութիւնը ապահովեցնելու համար, արգելում էր ամերիկացիներին գործարաններ հիմնել, «եթէ միայն համարձակուեն մի գուլպա կամ մի պայտ շինել, ցոյց կը տամ ևս նրանց մեր գորութեան ամբողջ ոյժը», ասում էր անգլիական նախարարապետներից մէկը: Գաղութները տալիս էին մայր-երկրին, Անգլիային, 3 միլիոն օժանդակու-

թիւն, որը սակայն վաւերացուում էր ամերիկացիների յօժարակամ վճռով: Երբ նախարար Հօլպօլին առաջարկեցին նոր հարկեր մտցնել գաղութներում, նա պատասխանեց «Այդ հոգսը թողնում եմ իմ հետնորդներին նրան, ով աւելի քիչ կը սիրի իր հայրենիքը»:

Եօթնամեայ պատերազմի ժամանակ ամերիկացիք օգնում էին Անգլիային և այդ նպատակով, զօրք ու դրամ ուղարկելու համար, աւելի սերտ միութիւն հաստատեցին իրար մէջ, բայց երբ 1763 թուին անգլիական վերին և ստորին պալատները, գրեթէ միաձայն, առանց գաղութների համաձայնութիւնը հարցնելու, որոշեցին մտցնել Ամերիկայում արքունի դրօշմուած թուղթ, ամերիկացիք բողոքեցին դրա դէմ ոչ միայն գրչով, այլ և դործով: Նրանք գրաւեցին այն նաւերը, որոնք բերել էին դրօշմուած թուղթը, այրեցին բոլոր հակերը և խօսք կապեցին իրար հետ չը դործածելու անգլիական ապրանքները, մինչև որ օրէնքը չը վերացուի: Երբ 1766 թ. օրէնքը վերացուեց, ամերիկացոյց ղնծութեանը չափ չը կարս Բայց մէկ տարի անցած անգլիական պարլամենտը ինքնազուլս նոր տուրքեր նշանակեց թղթի, ապակու, ներկի, պղնձի և թէյի վրայ: Ճշմարիտ է, շուտով այդ հարկերը ոչնչացրին, բայց թէյի հարկից, բայց ամերիկացիներին այս դիջումը չը գոհացրեց, նրանք հրաժարուեցին թէյ գործածելուց: «Մենք ընդգիմադրում ենք ոչ թէ նրա համար, — ասում էր Վաշինգտօնը, — որպէս զի չը վճարենք աւելորդ 6 սու մէկ ֆունտ թէյի վրայ, այլ մեր ազատութեան սկզբունքի համար»:

Բայց դեռ ոչ ոք չէր մտածում անջատուել մայր-երկրից, աշխատում էին խոսովութիւնը վերջացնել համաձայնութեամբ: Սակայն ընդգիմադրութիւնը սաստկանում էր, ամերիկացիք բացարձակ կերպով ատելութիւն էին ցոյց տալիս դէպի անգլիական ղինուորները, «դէպի այդ սրիկաներն և ծովի խեցգետինները»: 1773 թ. Բօստօն քաղաքի նաւահանգիստը մտաւ մի անգլին նաւ թէյով, բնակիչները ծպտուած մտնում են յանկարծ նաւը ու ամբողջ բեռը չարտում ծովը: Անգլիան իշխանապետ է նշանակում Մասաչուսեթսի նահանգապետին Ամերիկացիք առաջարկում են թէյի ամբողջ արժէքը, առաջարկը մերժուում է, պահանջուում է անպայման հնազանդութիւն: Փիրաղելֆիայում հաւաքուած վեհաժողովը այն ժամանակ, դեռ ևս Անգլիայից չը խզուած, հրատարակում է մի հրովարտակ մարդկային իրաւունքների մասին՝ յայտարարում բոլոր մարդկանց հաւասարու-

թիւնը 1775 թ. Անգլիայի Գէորգ թագաւորը ուղարկում է Բօստօնի վրայ զօրք. ամերիկացի կամաւորները, Վաշինգտօնի հրամանատարութեամբ, ջարդում են այդ զօրքը: Այսպէս սկիզբ առնւեց պատերազմը:

Բոլոր գաղութները յարուեցին Ֆիլադելֆիայի հրովարտակիրն Վեհաժողովը նորից գումարուեց և 1776 թ. յայտարարեց անկախութիւն և տասերեք գաղութների միութիւնը. ամեն մի գաղութ պահպանում էր ներքին քաղաքական և կրօնական ազատութիւն: Վաշինգտօնը ստացաւ իշխանապետական լիազօրութիւն:

Ջորջ Վաշինգտօնը (1732—1799) ծնուել էր Վիրգինիա նահանգում և ունենալով ընդարձակ կալուածներ՝ պարապում էր գիւղատնտեսութեամբ: Նա մասնակցել էր արդէն եօթնամեայ պատերազմին և արտակարգ զինուորական ընդունակութիւններ ցոյց տուելով Վերադառնալով գիւղը, նա ընտրուել էր նախ Վիրգինեան պարլամենտի անդամ և աչքի ընկել իր հեռատես խելքով և հաստատ ընաւորութեամբ: Երբ սկսուեցին անբաւականութիւններ գաղութների և մայր-երկրի մէջ, նա առաջինն էր, որ իր ձայնն էր բարձրացրել գաղութների իրաւունքները պաշտպանելու համար: Այժմ, իբրև զօրքի ընդհանուր հրամանատար, նա պէտք է զէնք դօնէր, պատերազմական միջերթ, պաշարեղէն մի անկարգ, անկանոն զօրքի համար, որ բաղկացած էր 14 հազար զէսից-զէսից եկած մարդկանցից: Մեծ դժուարութեամբ նա կարգապահութիւն մտցրեց այս ամբողջի մէջ, բայց լաւ էր հասկանում, որ այսպիսի ոյժերով կարող է միայն պաշտպանուել, զիտել և միայն յանկարծակի յարձակուել թշնամու վրայ: Ոչ մէկ անգամ նա չը յաղթեց հակառակորդին բաց դաշտում, սակայն իր պաշտպանողական և դիտողական սիստեմով այն տեղը հասցրեց նրան ութը տարուայ ընթացքում, որ նա չէր համարձակուում այլ եւս որեւէ մեծ արշաւանք ձեռնարկելու: Քանից անգամ նա պարտուել է, և կրկին զօրք հաւաքել ու կանգնել թշնամու դէմ: Երբեմն նրա գնդի մէջ մնացել է միայն 2000 հոգի՝ այն էլ ցրտին, սովին, պատերազմական միջերթի պակասութեանը ենթարկայ. սկսուել են խռովութիւններ, գլուխ են բարձրացրել ըմբոստներ, բազմացել են փախստականներ: Բայց նա չէր ընկճուում և բնաւորութեան ոյժով և անձնազօհութեամբ առաջ էր մղում կռիւրը: 1778 թ. ամերիկացիք կարողացան ոգեւորել ֆրանսիացոց և նրանց կառավարութեանը ու նրանցից օգնութիւն ստանալ:

Այս դաշնակցութեանը շուտով միացաւ և Սպանիան: Վերջապէս 1783 թ. Վերսալում (Պարիզի մօտ) հաշտութիւն կապուեց: Անգլիան ճանաչեց Միացեալ Նահանգների անկախութիւնը: Բայց պատերազմի վերջին տարին վեհաժողովից անբաւական եղողներ թիւը այնչափ էր շատացել ամերիկական զօրքի մէջ, որ քիչ էր մնում փոխուէր բացարձակ ապստամբութեան, որովհետեւ վեհաժողովը չէր մտածում զինուորների ապագայի մասին. Վաշինգտօնին նոյն-իսկ առաջարկողներ եղան՝ այդ դժգոհութիւնից օգտուելու և զօրքի գլուխ կանգնելով՝ միապետութիւն հիմնել: Նա մերժեց այս անարգ առաջարկը: Եւ երբ 1783 թ. անգլիական զօրքերը բոլորովին հեռացան Նիւ-Եօրքից, նա ցրուեց զօրքը, վեհաժողովի ներկայութեամբ հրաժարուեց իր լիազօրութիւնից և վերադարձաւ իրրեւ սոսկ կալուածատէր իր Մօունտ-Վերնօնը. «Թաթախման գիշերը—գրում էր նա այստեղից իր մէկ բարեկամին,—այս տան դուռը մտաւ մի մարդ, որը իննը տարով ծերացել է: Ես սկսում եմ զգալ ինձ գոհ և ազատ ամեն հասարակական հոգսերից: Յոյս ունեմ օրերիս մնացորդը անցկացնելու, ազնիւ մարդկանց հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանելով և ժամանակս տնային հոգսերին նուիրելով: Երկրագործի կեանքը ամենաքաղցրն է. առանց ոչ ոքի նախանձելու գոհ եմ ամենքից: Այս հոգեկան վիճակի մէջ ես խաղաղ կիջնեմ կեանքի դետով, մինչև որ պառկեմ նախահայրերիս կողքին»: Սակայն Վաշինգտօնին չա՛ղողեց երկար վայելու այս հանգստութիւնը. նա պիտի այս հանգստութիւնը զոհէր, որպէս զի «առաջինը լինի խաղաղութեան մէջ, որպէս առաջինն էր եղել պատերազմի մէջ»:

Հասկանալով որ հայրենիքը պէտք ունի մի ամուր կազմակերպութեան և կենդրոնացած վարչութեան՝ նա հակուեց «միութենականներին» կուսակցութեան կողմը և, ընտրուելով ընդհանրական ժողովի պատգամաւոր, նպաստեց այն դաշնագրութեան խմբագրուելուն, որը մինչև օրս գործադրում է: Նա ընտրուեց նահանգների առաջին նախագահ և այս պաշտօնի մէջ յետոյ կրկին վերընտրուեց. իսկ երրորդ անգամ ընտրուելուց նա հրաժարուեց և ազգին ուղղեց մի հրաշալի դիմում, որի մէջ աւելի պայծառ փայլում է նրա օրինակելի քաղաքացի լինելը: Նա մեռաւ 1799 թ. Երջանիկ իր ամուսնութեան մէջ, բայց անզուակ լինելով, նա մեծ գումարներ թողեց յօգուտ դպրոցների և ազատութիւն տուեց իր ստրուկ նեգրերին: Թաղուած է Մօունտ-Վերնօնում:

Բրեւո Հարտի ներկայ վէպիկի նիւթը առնուած է այսնչա-
նաւոր ժամանակի այն միջոցից, երբ նոր էին սկսուում բանակ-
ցութիւններ Սպանիայի հետ՝ Անգլիայի դէմ յարձակողական
դաշն կապելու համար:

ՍՏ. Լ.

ԻՆՆԸՍՈՒՆ ԵՒ ՈՒԹԸ ՏԱՐԻ ԱՌԱՋ

I

Ժամանակը՝ 1779 թուի ապրիլը. տեղը՝ Մօրիստաունը
Նիւ-Ջերսէում *):

Շատ ցուրտ էր. Հիւսիս-արեւելեան քամին ամբողջ օրը
փչում էր, պինդ զանգուածը դարձնելով ջրալի ցեխը Բասկին-
րիջի ճանապարհին: Հեծելազօրի պայտերի հետքերը, պաշարա-
կիր սայլերի ախօսները և թնդանօթների սնիւների խոր շաւիղ-
ները ստոչելով ճշգրիտ ժամանակագրութիւն էին ներկայացնում
այն ամենի, ինչ որ անցել, դարձել էր այս ճանապարհով մինչեւ
երեկոյ Սառցէ լուրաները կախ էին ընկել չափարների վրայից,
իսկ արծաթափայլ եղեամբ ծածկում էր հին թխկենների կեղեւն
ու մերկացած քարերը, կարծես բնութիւնը իր զգեստները մաշած
լինէր կոնների ու ծնկների վրայ, երկար ժամանակ սպասելով
ուշացած դարնան: Առաւօտեան ջերմութիւնից փափկած սակա-
ւաթիւ տերեւները նորից կոշտացել էին ու ողբալի ձայնով
ճոճում էին քամու բռնկումների ժամանակ, ամառուայ մօտե-
նալու վերջին յոյսը ոչնչացնելով:

Տեղ-տեղ, ճանապարհի ափերին, երեւում էին քանդուած
չափարներ ու շրջապատեր, իսկ աւելի հեռու ձգւում էին ձիւ-
նապատ դաշտեր, որոնց վրայ ցիր ու ցան էին եղած սայլերի
բեկորներ, չորերի, ձիասարքերի և այլ այսպիսի մնացորդներ,
իբրեւ պարզ ապացոյց, որ այստեղ նորերս բանակ է եղել ու
անցել է մարդկային մեծ ամբոխ: Այս ու այնտեղ դեռ

*) Նիւ-Ջերսէ նահանգը գտնուում է Ռեյաար և Հուձօն գետերի մէջ-
տեղ, Հիւսիսային Սմերիկայի արեւելեան ափին. 1664-ից պատկանում էր
անգլիացիներին, բայց 1776 թուին մտաւ 13 զաղութների միութեան մէջ:

պահպանուել էին կոպիտ շինած հիւղեր և արագ կառուցած, չը վերջացրած բերդաթմբեր: Կիսով չափ խանգարուած խրամատի յատակով փորսող տուող աղուէսը կամ հողաթմբի յետեւում թագ կեցող գայլը նշան էին աւերամունքի ու մարդկային կեանքի բացակայութեան:

Մայր մտնող արեւի դժգոյն ճառագայթները փոքր առ փոքր անհետանում էին երեկոյեան երկնքի վրայից. Օրանեան լեռների հեռաւոր գագաթները պատուում էին խաւարով. մինչեւ անգամ վասնօնդի ամենամօտիկ լանջերը, որոնք ծածկուած էին նոճիների երկար շարքերով, մի սեւ զանգուած էին ներկայացնում: Գիշերը համնելուն՝ անխախտ խաղաղութիւն տրեց. չէր լսոււմ տերեւների սօսափիւնը, սառած ասեղները չէին թափոււմ մերկացած ճիւղերից ու դարաւոր ծառերը պահպանում էին մեռելային լուսթիւն: Գետնի վրայ և օդի մէջ այնպէս խաղաղ էր, որ ցամաքային զօրագնդի մերձաւոր պահպանները կարող էին լսել այն պայտերի գնդոցը, որոնք խուլ ձայնով փշրոււմ էին բարակ և պղտոր սառուցը մեծ ճանապարհը խզմզող ախօսների վրայ:

Այս անխորժ հանգամանքը կամ դուրսէ ճանապարհի դժուարութիւնը զայրացնում էին ձիաւորին, որին դեռ ծածկոււմ էր չըջապատող մթութիւնը: Նրա երեւալուց շատ առաջ, արդէն լսելի էր նրա ձայնը՝ որ անիծում էր ճանապարհը, ձիուն, մերձաւորներին և սմբողջ երկիրը: «Կամայ, սատանի գաւակ: Մի սայթաքիւր իժի ծնունդ: Անիծուի ճանապարհը, անիծուի աչտեղի ժողովուրդը: Աւազակներ, չեն կարող ճանապարհը նորոգել:»

Յանկարծ ձիաւորի կերպարանքն ու նրա ձին պարզորոշ նկատուելին լեռան կատարի վրայ ու նոյնպէս անսպասելի կերպով անհետացան: Պայտերի գնդոցը մարեց:

Անծանօթը ծռուեց դէպի ամայի ձեմելիքը, որ ծածկուած էր կուսական ձիւնով: Ծանապարհի մէկ ափով ձգուող չըջապատը աւելի լաւ էր պահպանուել, քան թէ գաշտերի չափարները: Անցնելով ձեմելիքի կէսից աւելին, ձիաւորը վայր թռաւ ձիուց և կապեց ծառից: Յետոյ կամացուկ, զգուշութեամբ հասաւ մինչեւ ձեմելիքի ծայրը, որտեղ մի փոքրիկ ազարակի տանիքի պատուանում ճրագ էր երեւում: Յանկարծ այն ճրագը հանգաւ: Անծանօթը կանգ առաւ անհամբերութեամբ և բողբոջական տատանումից յետոյ յետ դարձաւ մինչեւ քարէ չըջապատի այն տեղը, որտեղ նրա վրայից երեւում էր ախոռատան կտուրը: Մօտիկ մի անագին թէղօջ ծառ ձգոււմ էր իր անտերեւ ստուե-

րը պատի ու չըջակայ ձիւնի վրայ: Անծանօթը կանգնեց ծառի մուսլ հոփանու տակ:

Թէեւ այդ բողբոջին ոչ մի առանձին բոմանտիկ բան չը կար այդ ձիւնով ու եղեամով ծածկուած ծառի մէջ, բայց մի ինչ որ տարօրինակ, սանտիմենտալ բան էր զգացոււմ այն քարերի մէջ, որոնք քանդուած էին պարիսպից ու դարսուած մի կոպիտ նստարանի ձևով, նոյնը աւելի ևս զգացոււմ էր եղեամի տակից ծառի կեղեւի վրայ նշմարուող այն՝ «Յաւիտեան քունը» մակագրութեան մէջ, որ փորագրուած էր մարդկային սրտի մի նկարի գլխին:

Սակայն անծանօթը նայոււմ էր միայն ախոռատան կտուրին ու նրա յետեւում տարածուող լայնարձակ դաշտին: Անցաւ հինգ, տասը բողբոջ: Լուսնեակը կամայ դուրս էր լողում Օրանեան լեռների սեւ շղթայի յետեւից ու նայոււմ անծանօթի վրայ մի փոքր շառագունած, կարծես ինքն էր նրան տեսալողութիւն նշանակողը:

Այսպէս լուսաւորուած կերպարանքն ու դէմքը պատկանում էր գեղեցկատեսիլ, բարձրահասակ, մօտ երեսուն տարեկան մի տղամարդու, որը այնպիսի պատերազմիկ տեսք ունէր, որ առանց ուննոցների էլ կարելի էր ճանաչել, որ ցամաքային զօրագնդի կապիտան էր լինելու: Սակայն այդ բողբոջին դէմքի արտայայտութիւնը հակասում էր նրա քաջարի կանգնուածքին, նրա բոլոր դիմագծերի մէջ արտայայտոււմ էր ինչ-որ՝ նրա ոյժին անհամարատասխան նեարդային անհամբերութիւն, որ քանի գնում սպասկանում էր: Վերջապէս նրա դրդոււմը այնտեղ հասաւ, որ նա սկսեց ոտով ցիր ու ցան անել պատից թափած քարերը:

—Մնւ—նւ:

Կապիտանը ցնցուեց: Նա չը վախեցաւ, բայց նրան տարօրինակ թուաց, ինչպէս կարող էր կովը այդպէս առանց ձայն հանելու մօտենալ հէնց պատին:

—Մնւ—նւ:

Նա կպաւ պատին ու արտասանեց կէս-ձայնով:

—Սնւ, Բասսի, Սուս, Մօլլի:

—Մնւ—նւ,—լուսեց յանկարծ, բայց իսկոյն խլացաւ կանայի արծաթահնչիւն ծիծաղից:

—Տանկփելլա,—բացականչեց անծանօթը և բռնաղբօսիկ կերպով սկսեց հետը ծիծաղել:

—Բաս, ինչ էիք կարծում,—արտասանեց միեւնոյն ձայնը և չըջապատի վրայ երեւաց դեռահաս աղջկայ գեղանի գլխիկը, —գուցէ դուք կարծում էիք, որ ես ձեզ ամբողջ գիշեր կը սպա-

սեմ: Կամ կարծում էիք, որ ես ձեր անունը կը տամ, սամողջ ձայնովս կը կանչեմ—կապիտան Ալլան Բրիւստեր:

—Շշշ, Տանկֆելլա:

—Ալլան Բրիւստեր, Կօնեկտիկուտի զօրաբաժնի կապիտան, —չարունակեց դեռահաս աղջիկը, կռթնելով պատին,—պատիւ ունեմ ներկայանալու, ձեր խոնարհ սպասուհին ու սրտակից բարեկամը:

Կարճատև կռուից յետոյ կապիտան Բրիւստերը տիրացաւ օրիորդի ձեռներից մէկին, և նա դադարեց ընդդիմադրելուց:

—Ամեն մէկին թոյլ չեմ տայ այդ,—ասաց, շրթունքները ուռչնելով, գեղեցկուհին.—[Թէկուզ ձեր Մօրիստաունի պարահանդէսների փքուած արկիւնները իմ վարքը անպատշաճ համարէին:

—Դատարկ բաներ են, իմ աղանձեակս—պատասխանեց կապիտանը, որը արդէն հեծել էր պատի վրայ ու գրկել աղջկան.—բայց—աւելացրեց նա, բռնելով նրա կզակից ու այնպէս շուռ տալով նրա դէմքը, որ լուսնեակը լիովին լուսաւորէ, —ինչո՞ւ դուք պատուհանի ճրագը հանգցրիք. ինչ է պատահել:

—Մեզ մօտ անսպասելի հիւրեր են եկել. կոմս...

—Որ և է անիծուած հետէնցի*) կը լինի...

Բրիւստերը խանդոտ աչքով նայեց ուղղակի դեռահաս աղջկայ աչքերի մէջ. Լուսնեակը նոյնպէս նայում էր նրա վրայ քնքոյշ, հանդարտ ու վստահ:

—Ոչ, Ալլան, նա հասարակ դաղթական չէ, այլ ազնուատոհմ օտարազգի արքայական Ազնուական սերունդից է...

—Ազնուական չէ ու ինչ.—պատասխանեց արհամարհանքով Բրիւստերը,—վեհաժողովը**) վհուկ է, որ բոլոր մարդիկ մեր երկրում իրար հաւասար են ու ազատ:

—Այդ սուտ է, Ալլան,—պատասխանեց Տանկֆելլան, յօնքերը կիտելով.—մինչև անգամ հորթերը չեն ծնում միմեանց նման: Բրիւստերից երէկ ծնուած հորթը հօ նման չէ ուղղակի Սուռէյից բերուած իմ սիրելի կովի սիրուն քիժօյին: Նրանք իրար նման չեն:

*) Գերմանիայի Հետէն իշխանութիւնը ամենից շատ զինուոր էր վարձու տալիս անգլիացիներին, և „հետէնցի“ հաշտական խօսք էր ամերիկացու բերանում:

**) Ֆիլադելֆիայի վեհաժողովը, որ Բուսսօյի, Վօլտերի և ուրիշ ֆրանսիական փրիւսփաների գրուածքերի ազդեցութեան տակ հրատարակուած էր բոլոր մարդկանց հաւասարութիւնն ու ժողովրդական կամքի ազատութիւնն ու գերիշխանութիւնը:

—Տիտղոսները դատարկ հնչին են,—պատասխանեց Բրիւստերը շեշտակի:

Տիրեց լուռութիւն:

—Ոչ, մնայել է դեռ մի ազնուական մարդ,—ասաց վերջապէս դեռահաս աղջիկը,—նա իմն է, նա բնութիւնից արիստօկրատ է:

Բրիւստերը ոչինչ չը պատասխանեց: Գեղեցկուհու նենգաւոր ժպտից և կօկետ շարժումներէն հասկացաւ, որ այն արիստօկրատը, որի մասին խօսում էր աղջիկը, նրա առջին էր կանգնած և ամուր գրկում էր նրան: Մի քանի րոպէ անցաւ այս անխօս գրկախառնութիւնների մէջ:

Այսպիսի նեղ րոպէներին թոյլ կնամարդը միշտ աւելի շուտ է ուշքի գալիս, քան թէ ուժեղ, իմաստուն տղամարդը, և այս պատճառով, մինչդեռ կապիտանը ամբողջովին անձնատուր էր եղել համբոյրների արբեցնող երջանկութեանը, Տանկֆելլան լսեց ազարակի դանակի ճուռոցը և նկատեց, որ լուսինը արդէն շատ է բարձրացել երկնքում և շատ պայծառ է լուսաւորում:

—Պատմեցէք ինձ, Ալլան, ամենը, ինչ դուք անում էիք, ամենը, ամենը,—ասաց նա քնքոյշ, բայց հաստատ կերպով ազատուելով Բրիւստերի թեւերից և յոյց տալով նրան սեղ իր կողքին՝ պատի վրայ:

Աղջիկը նայում էր նրան իր սիրունիկ աչքերով, անկեղծ, բոցավառ, մանուկի պէս վստահացող աչքերով, որոնք կարծես ամեն մէկին ասում էին. «Սիրտս բաց է, թող քո սիրտն էլ բաց լինի»:

—Գործերը աւելի և աւելի վատ են դնում, Տանկֆելլա,—պատասխանեց կապիտանը դէմքի նախկին անբաւական արտայայտութեամբ,—մենք կորչում ենք: Վեհաժողովը ոչինչ չի անում, իսկ Վաշինգտօնը անընդունակ է երկիրը դուրս բերելու այս նեղ վիճակից: Փոխարէն Ֆիլադելֆիա գնալու և Հանկօկի ու Ագամսի*) ձեռքի տակ գտնուած ստորաքարշ ամբոխի վրայ սուրիններով յարձակուելու, նա նամակներ է գրում:

—Յիմար ծերունի, բթամիտ ձեւածոյ,—բացականչեց Տանկֆելլան.—Իսկ մէկ նրա կնոջը նայէք: Միսս Ֆօրդը, միսս Բէլին ու Մօրիս կօմսութեան ուրիշ արիստօկրատուհիք գնացել էին նորին գերազանցութեան մօտ, զարդարուած իրանց լուսագոյն զգեստներով, ինչպէս վայելչութիւնը պահանջում է: Գինեքալի կինը նրանց տանու շորով ու գոգնոցով է ընդունել: Վայելուչ

*) Սրանք գրգռեցին Ֆիլադելֆիայի ժողովուրդը միութեան կողմնակիցների դէմ:

ընդունելութիւն է, ինչ ասեմ: Սակայն բոլորն էլ գիտեն, որ տիկինը անսպասելի կերպով երեւացել է այստեղ իր փայփլուն վերգինեցի կաւալերների հետ, որպէս զի տեղն ու տեղը յանցանքի մէջ բռնի գեներալին, որը այստեղ պարանանդէսներ է տալիս: Լաւ բաներ են երևի կատարուում այդ պարանանդէսներին:

—Այդ բոլորը դատարկ բամբասանք է—պատասխանեց կապիտան Բրիւստերը—գեներալը այդ հասարակական պարանանդէսները տալիս է մտքերը հանգստացնելու և սպաներին զրօսանք պատճառելու համար: Ինքս այնտեղ սակաւեմ լինում: Ինձ համար զոտելի է պար գալ այն ժամանակ, երբ հայրենիքը վտանգի մէջ է: Այո, Տանկֆելլա, մենք սաստիկ պէտք ունենք մի ընդունակ առաջնորդի: Կօնեկտիկուտայիք այդ լաւ են հասկանում և եթէ նրանք ինձ վրայ են մատնացոյց անում, պատճառն միայն այն է, որ գիտեն իմ հայրենասիրութիւնս և թէ որքան զոհաբերութիւն եմ արել հայրենիքիս համար: Ներանց յայտնի է, որքան բան եմ ես կրել:

—Ներեցէք ինձ, Ալլան,—բացականչեց դեռահաս աղջիկը քնքոյ կարեկցութեամբ նրան նայելով.—մոռացայ էլ... գուցէ դուք, սիրելիս, քաղցած էք:

—Ոչ,—պատասխանեց Բրիւստերը մոայլ սակաւապետութեամբ.—թէ և արդէն անա մի շաբաթ է, որ միս չեմ գրել բերանս:

—Չեղ համար բան ման եմ բերել,—շարունակեց Տանկֆելլան, կռնալով և մի զամբիւղ մատուցանելով կապիտանին,—անա մի զոյգ վառիկ, որ ինքը զօրապետը ոչ մի փողով չէր կարողանայ գնել: Ես սրանց պահում էի իմ հրամանատարիս համար: Չամբիւղի մէջ նոյնպէս մի աման կայ ձեր սիրած անուշեղէնից և մի կտոր ապուխտած բուր: Դուք միշտ հաւանում էիք այս ապուխտը: Տէր Աստուած, երբ պէտք է լինի, որ հանգիստ սեղան նստենք մեր սեփական տանը: Ե՞րբ պիտի վերջանայ այս սարսափելի պատերազմը: Աւելի լաւ չէր լինի—աւելացրեց նա, նայելով քնքոյ աղերսանքով կապիտանի վրայ,—վերջ դնել սրան: Գէորգ Թագաւորը այնպէս վատ մարդ չէ, ինչպէս ասում են. ձյամբիտ չէ: Հաւատացած եմ որ քեզ հետ, սիրելիս, նա շուտով կը կարգադրէ բոլոր գործերը, առանց վաշինգտօնի պէս մարդկանց միջամտութեան, որոնք մարդուն սովամահ են անում: Եթէ Թագաւորը ճանաչելիս լինէր ձեզ, Ալլան, ի հարկէ, յօժարութեամբ կը լսէր ձեր խորհուրդը և կ'անէր ամեն բան, ինչ որ հարկաւոր է:

Ասելով այս, նա յանձնում էր կապիտանին զամբիւղի մի-

ջից բոլոր բերած ուտելեղէնները, իսկ կապիտանը կոխում էր իր գրպանները:

—Ես իմ մասին չեմ մտածում, հոգիս,—ասում էր նա,—բայց ես որոշ պարտականութիւններով կապուած եմ հայրենակիցներին հետ, Կօնեկտիկուտի հետ և գուցէ նեղ բոպէին հարկադրուած լինեմ ծայրայեղ միջոցների դիմելու ընդհանուրի օգտին: Ես հրամանատարութեանը չեմ ձգտում, բայց...

—Երանի թէ դուք լինէիք զօրքի հրամանատարը,—բացականչեց Տանկֆելլան,—երկու շաբաթից յետոյ հաշտութիւնը գլուխ եկած կը լինէր:

Ամեն շողքորթութիւն, որքան էլ սա հրէշաւոր լինի, աղամարզը ընդունում է հրճուանքով և հաւատով, եթէ լսում է իրան սիրող կոտորից, որը իր համոզմունքով, բոլոր ուրիշ մարդկանցից լաւ է հասկանում նրա գաղտնի արժանաւորութիւնները, իսկ երբ այս շողքորթութիւնը արտասանում են դեռատի, ալ, զողորջուն շրթունքները, սա նոյնչափ անպայման արդարացի է թւում, որչափ հետնորդների անաչառ դատաստանը: Այս պատճառով կապիտանը ինքնագոհ կերպով ժպտաց, զգուշութեամբ ծոցը գնելով վառիկները:

Դեհ, Ալլան, այժմ ժամանակ է որ գնաք. հայրս երևի արդէն նկատել է իմ բացակայութիւնը,—ասաց միսս Բլոսօմը այն կեղծ-մայրական ձայնով, որ գործ են ածում մինչեւ անգամ շատ մատաղահաս օրիորդներ իրանց երկրպագուների նկատմամբ,—գնացէք, սիրելիս: Դուք կրկին կը գաք չորեքշաբթի: Չը համարձակուէք այցելել միսս Զուգիտին և չըջեցնել ջահիլ աղջիկներին ձեր ձիով: Եւ որ գլխաւորն է, հաղորդեցէք ինձ երբ նորից սոված կը լինէք:

Սիրով ու անհանգստութեամբ լի հայեացքով նայեց նա կապիտանին, որ նրան գրկեց այնքան բոցավառ կերպով, որքան այս թոյլ էին տալիս նրա գրպանները լցնող ձուերը, վառիկները և անուշեղէնի ամանը: Մի քանի բոպէից յետոյ նրա ձիւն ոտնաձայնը լսուեց սառուցի շերտով ծածկուած ճանապարհի վրայ:

Բայց հասաւ նա հարևան լեռան գագաթին թէ չէ, երկու ձիււոր նրա ճանապարհը կտրեցին:

—Կապիտան Բրիւստերն էք, եթէ լուսնեակը ինձ չէ խաբում,—ասաց նրանցից մէկը, սիրալիւր կերպով ողջունելով:

—Այո, իսկ դուք մայր վան-Յանդան էք, եթէ չեմ սըխալում:

—Բոլորովին ճիշտ է: Շատ ցաւում եմ, կապիտան Բրիւստեր, որ պէտք է ձեզ ձերբակալեմ:

—Ո՞ւմ հրամանով:

—Զօրապետի:

—Ինչի համար:

—Անհնազանդ լինելու և իշխանութիւնը չը յարգելու համար:

Սուրբ, որը կապիտանը հանել էր պատեանից ձիաւորների անսպասելի մօտենալուն պէս, դողաց նրա ձեռքին, բայց մի րոպէում նա կոտրեց այս սուրբ իր թամբի գլխի վրայ և կտորները շարտեց մայրի տոների տակ:

—Ես հետևում եմ ձեզ,—արտասանեց նա մռայլ կերպով:

—Կապիտան Բրիւստեր,—ասաց շատ լրջօրէն մայօր Վան-Յանդար,—այդպիսի ցասման և դայրոյթի վտանգաւոր հետեւանքները չը պէտք է որ ես ձեզ մատնացոյց անեմ, բայց տեսէք, ինչպէս վնասուել է դրանից ձեր պաշարեղէնը: Դեհ, առաջ:

Բրիւստերը հայեացքը իջեցրեց և ափսոսալով տեսաւ, որ անուշեղէնը, Տանկֆելլայի այդ անգին ընծան, կամաց ծլլում էր ձիու պարանոցով:

II

Միսս Բլոսօմը սպասեց մինչեւ կապիտանի անհետանալը և յետոյ կամաց անցաւ ծառերի ստուերով մինչեւ ազարակի յետեւի դուռը: Աննկատելի կերպով տուն մտաւ սանդուխով վաղեց իր սենեակը տանիքի տակ, ուր մի փոքր առաջ վառւում էր ճրագը: Նա նորից մտը վառեց, դրեց կօփոզի վրայ և, մօտենալով հայելուն, սկսեց ուղղել բարձր և զջիւրէ սանրը, որը ցած էր իջել կապիտանի գրկախառնութիւնների ժամանակ, և առհասարակ, իբրև ճշմարիտ կին, միջոցներ ձեռք առաւ այն ամեն հետքերը սնչայնելու, որոնք կարող էին վկայել նրա երկրպագուի քնքշութիւնների մասին: Այստեղ պէտք է նկատենք, որ տղամարդը յաճախ վերադառնում է իր սիրուհու տեսակցութիւնից ցրուած, բարկացած, ամօթահար, յաճախ մոռանում է թափ տալ իր բաձկոնի վրայից կոճակին փաթաթուած շիկահեր մազը: Բայց նայեցէք սիրուն կատուին, որը հէնց նոր խմել է մի ամբողջ սերով լի կաթնաման. նրա մաքուր դէնչիկը և թաւիչէ թաթիկները ոչ ոքի մէջ կասկած անգամ չեն արծարծի, թէ ինչ յանցանք է կատարել:

Դեռահաս աղջիկը գոհ մնաց նրանից, ինչ որ տեսաւ հայելու մէջ, և իրաւունք ունէր. թէեւ հագածը պարզ չթից էր կարուած, վզի մօտ հաւաքուած ու իջնում էր կարճ, գորշագոյն

ֆլանելէ շրջագոգեստի վրայ, բայց նրա նազելի գլխին ու բարակ ոտիկը ճարմանդաւոր հաստ կօշիկի մէջ էլ պարզ ցոյց էին տալիս, որ նրա մնացած, ծածկուած հրապոյրներն էլ նոյնչափ դիւթիչ էին:

Ուղղելով իր հագուստը, Տանկֆելլան դուռը բաց արեց, ակննջ դրեց և սանդուխով կամացուկ իջաւ ներքեւ: Դաշտում մուտք էր և միայն հիւրատուն տանող դռան տակից երեւում էր լոյսի շող: Նա մի րոպէ կանգ առաւ, վարանելով՝ գնայ արդեօք աւելի առաջ թէ՞ ոչ, բայց յանկարծ զգաց, ինչպէս մէկը իր ձեռքից բռնեց ու տարաւ հարեան սենեակը: Այնտեղ էլ մուտք էր. լսուեց կայծաքարի չրխկոցը և վառած մոմի լոյսով դեռահաս աղջիկը իր առջեւ տեսաւ հօրը, որ մի ալևոր, կնճռոտ, մօտ վացունամեայ ծերունի էր:

—Դուք բարեհաճել էք զբօսնելու, միսս—ասաց նա, բայց չը թողնելով աղջկայ ձեռքը:

—Այո:

—Եւ մենակ,—աւելացրեց բարկութեամբ հայրը:

—Ոչ, մենակ չէի,—պատասխանեց դեռահաս աղջիկը մի ժպիտով, որը սկսուելով նրա շագանակագոյն աչքերից, աստիճանաբար անցնում էր չքնաղ շրթուներին ու սպիտակ, փայլուն առամներին:

—Ո՞ւմ հետ ուրեմն,—հարցրեց ծերունին, զգալով որ իր կատաղութիւնը թուլանում էր նրա հմայքների ազդեցութիւնից:

—Ես կոնեկտիկուտի գնդի կապիտան Ալլան Բրիւստերի հետ էի,—պատասխանեց Տանկֆելլան, նստելով սեղանի վրայ և խաղացնելով իր սիրուն ոտիկները:

—Նրան հետ:

—Այո:

—Բայց չէ որ ես արգելել եմ ձեզ, միսս, տեսնուել այդ մարդու հետ:

—Կը տեսնուեմ նրա հետ, երբ և որքան որ ուզենամ, հայրիկ,—ասաց դեռահաս աղջիկը, յամարձակութեամբ ձեռքը կանթելով:

—Տանկֆելլա Բլոսօմ:

—Աքներ Բլոսօմ:

—Տեսնում եմ՝ դու չը գիտես, ինչ վատ անուն է հանել նա,—ասաց ծերունին, փոխելով հայրական բարկացած եղանակը ընկերականի,—նրան մեղադրում են որ գինուորներին ապստամբութեան է գրգռում և դաւաճանում ազգային գործին:

1001
73074



—Իսկ որ օրինն է որ դուք, Արներ Բլօսօմը, այդպէս նուիրուել էք ազգային գործին: Դուք չէիք որ հրաժարուեցիք զինուորական գործակալներին այլապէս պաշար մատակարարելու, մինչև որ կրկնակի դին չը տան: Դուք չէիք, որ ինձ գովում էիք, որ ես համակարծիք չէի միսս Ֆօրդի քաղաքական հայեացքներին:

—Սո՛ւու,—ընդմիջեց նրան հայրը, ձեռքով ցոյց տալով հիւրատան դուռը:

—Սո՛ւու,—կրկնեց դեռահաս աղջիկը չարացած,—չեմ կամենում, որ ինձ սուս կացնեն: Ամենքը ասում են՝ սուս, կամաց: Ալլանը, դուք, այդ ինձ արդէն ձանձրացրել է: Միթէ աշխարհիս երեսին մի մարդ չը կայ, որ ինձ վրայ չաղաղակի՛ սուս:

—Անմիտ, յիմար աղջիկ ես, Տանկֆելլա, և այդ պատճառով քեզ պէտք է ամեն քայլափոխին զսպել:

Տիրեց լռութիւն, բայց շուտով միսս Բլօսօմը վայր թռաւ սեղանի վրայից և, բռնելով հօր ուղիղ գօտի կոճակից, կասկածական հայեացքը շեշտեց նրա վրայ:

—Ինչո՞ւ դուք ինձ ներս չը թողիք հիւրատուն: Ի՞նչու բերիք այստեղ,—հարցրեց նա:

Ծերունին շուարած մնաց:

—Նրա համար, որ... դու գիտես, կոմսը... սկսեց նա, բայց Տանկֆելլան ընդմիջեց նրան:

—Վախենում էք, չը լինի թէ կոմսը իմանայ իմ տեսակցութիւնները կապիտանի հետ: Լաւ, իսկոյն կերթամ և կասեմ նրան:

—Ի՞նչու դու այդ շատացիր աւելի առաջ, երբ գնում էիր հիւրատանից: Սակայն, բոլորը մէկ է: Ես քեզ կանգնացրի ոչ այդ պատճառով: Կոմսը հետը մի երիտասարդ է բերել և նրանք իրար հետ խօսում են մի ինչ որ օտար լեզուով, երեւի, իտալերէն:

—Ո՞րտեղից է եկել այդ պատանին,—հարցրեց Տանկֆելլան, երկիւղ կրելով, մի գուցէ այդ անսպասելի հիւրը իրան տեսած լինի կապիտանի գրկի մէջ:

—Քաղաքից:

—Ի՞նչ կայ ուրեմն:

—Աւելի լաւ չի լինի, որ մի քիչ զուգուես,—ասաց հայրը,—նա փայլուն ֆրանս է, քո գաւառական երկրպագուների հատը չէ:

—Ո՛չ,—պատասխանեց Տանկֆելլան, լիովին համոզուած, որ իր համեստ զգեստով էլ հրապուրիչ էր:

Ծերունին նայեց նրան և լուռ համաձայնուելով նրա անվիճելի դատավճռի հետ, բռնեց նրա ձեռքից և տարաւ հիւրատուն:

—Իմ աղջիկս, միսս Տանկֆելլա Բլօսօմ,—ասաց նա, բաց անելով դուռը:

Դեռահաս աղջկայ երևալուն պէս սենևակում լսուող բարձր ձայները լռեցին և վառարանի մօտ նստած երկու ջենտլմէնները շտապով վեր կացան:

—Ի՞նչ բախտաւոր ենք, որ շնորհ բերիք մեզ մօտ, միսս Տանկֆելլա,—ասաց նրանցից մէկը ականջը ծակող օտարազգի արտասանութեամբ,—ես արդէն յոյսս կարել էի ձեզ տեսնելու. իմ բարեկամ բարօն Պոմպօզան նոյնպէս:

Բարօնը ժպտալով խորին ողջոյն տուեց, իսկ Տանկֆելլան խոնարհեց, այն ժամանակուայ սովորութեան համեմատ, աջ ոտով շրջան գծելով: Մի հայեացք բաւական էր, որ բարօնը հրճուանքով լցուէր նրա փոքրիկ ստիկից, նազելի կազմուածքից ու հրապուրիչ դէմքից. իր հերթին՝ աղջիկնը իսկոյնսեթ նկատեց, որ նա շատ գեղեցիկ է և որ նրա գլխաւոր հրապուրը վերի աչքերի մէջ է:

—Բարօնը օտարական է,—ասաց Բլօսօմը, ձեռքերը քսելով,—և երոպական արիստօկրատները սովորաբար ճանապարհորդում են օտար երկիրներում նրանց բնակիչների բարք ու վարքի հետ ծանօթանալու համար: Պարօնը կը գտնի Ջերսեյում, —չարունակեց Բլօսօմը, դառնալով Տանկֆելլային, թէև խոյս տալով նրա արհամարհական հայեացքից,—աշխատաւոր մարդկանց, որոնք միշտ պատրաստ են հիւրասիրել ճանապարհորդին և մատակարարել նրան ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է, աժան գնով: Այս նպատակի համար նա միայն պէտք է մօտը ոսկի ունենայ, ոչ թէ տեղական փող:

—Ճանապարհորդը ոչ միայն այդ կը գտնի... ասաց բարօնը շտապով,—բայց և գեղեցկութիւն, նազելիութիւն, տաղանդներ և այլն և այլն...

—Եւ առաքինութիւն,—յուշարարեց կոմսը:

—Այո՛, այո՛, և առաքինութիւն այստեղի գեղեցկուհիների մէջ: Հաւատացէք ինձ, իմ ազնիւ բարեկամ Բլօսօմ, որ ամեն երկրի մէջ գլխաւորը կանայք են:

Գնեերալ Վաշինգտօնը այնչափ բարի է, որ մեզ խոստացել է իր հովանաւորութիւնը, ասաց կոմսը:

—Գնեերալը հովանաւորում է ամեն մի յիմարին, ասաց Տանկֆելլան, շատագունելով,—բայց ոչինչ չը գիտեք արդեօք միսս Պրուդենս Բակստուերի մասին: Նրա փեսայուն կնիպ-

հատուկներն զօրաբաժնի մէջ է: Հաւատացած եմ, որ նա մի ազ-
նիւ հետէնցի է, ինչպէս պատմում է Պրուդենսը, բայց նրա բո-
լոր նամակները բռնուում են զենեքալի հրամանով, և լեզի Վա-
չինգտօնը ի հարկէ նրանց կարգում է, թէն ինչով է Պրուդենսը
մեղաւոր, որ նրա բարեկամը զէնքը ձեռքին ապստամբուել է
վեհաժողովից:

— Այդ պահանջում է հասարակ զգուշութիւնը, — նկատեց
Բլուսօմը, սնրաւական աչքով նայելով աղջկայ վրայ, — աղջիկը
թեթեամտութեամբ կարող է մի բան լեզուիցը թռչնել մեր
զօրքի շարժումների մասին, որ անհրաժեշտ է ծածուկ պահել:

— Շատ բնական է, որ աշխատի ազատել իր բարեկամին
գերութիւնից կամ դարանակալութիւնից, ինչպէս որ այդ տեղի
ունեցաւ այն գործակալի հետ, որը, ստանալով պաշար...

— Սուս, — արտասանեց ծերունին, զրկելով աղջկան, —
լիզուդ ոսկոր չունի: Սա, իբրև կնամարդ, բան չի հասկանում
քաղաքականութիւնից, — շարունակեց նա, դիմելով հիւրերին, —
մանաւանդ որ բազմաթիւ սիրելի անձնաւորութիւնների կո-
րուստը կատաղացրել է սրան...

Արտասանեց այս խօսքերը թէ չէ, իսկոյն արդէն փսոս-
տաց, որ լեզուից սրանց թոյրեց, որովհետև երկիւղ էր կրում,
չը լինի թէ արդարապէս Տանկֆելլան երևան հանի իր յարաբե-
րութիւնները կապիտանի հետ: Բայց, նրա մեծագոյն զարման-
քից, աղջիկը ոչինչ չը պատասխանեց և մինչև անգամ մի փոքր
կարմրեց:

Այստեղ խօսակցութիւնը փոխուեց և Բլուսօմը սկսեց խօսել
կոմսի հետ պատերազմի հետևանքների, զօրապետի գործողու-
թիւնների, վեհաժողովի գրութեան և այլ այս օրինակ բաների
մասին: Սենեակի միւս անկիւնում Տանկֆելլան խօսում էր բա-
րօնի հետ Մօրիստաունի հասարակաց պարահանդէսների մասին,
նրա մասին, թէ ո՞ւմ էին համարում քաղաքի մէջ առաջին
գեղեցկուհի, ճշմարիտ է՝ որ լեզի Վաչինգտօնի մաղերը ալեգարդ
են, ինքը զօրապետը ընկած է միսս Հաչնի յետևից, իսկ նրա
երիտասարդ աղիւտանտ մայօր Վան Յանդտը լրջօրէն է սիրա-
հարուած գենեքալուհու վրայ՝ թէ իբրև իր մեծաւորի կնոջ, նա
միայն սիրալիր է նրա հետ: Այս խաղաղ ժամապահառութեան
միջոցին յանկարծ լսուեց քամու սաստիկ ոռնաց, և Բլուսօմը մօ-
տենալով դրսի դռանը, յայտարարեց որ սաստիկ ձիւն է գալիս:

Կարճ միջոցում բնութեան մէջ տեղի էր ունեցել զարմա-
նալի փոփոխութիւն: Կուսինը ծածկուել էր ամպերի տակ և
օդը լցուել ձիւնի քուլաներով, որոնց դէս ու դէն էր քշում
սաստիկ, մրրկալից քամին:

Միսս Բլուսօմը ու բարօնը գնացին յետևի դռան մօտ նոր
օդերևոյթաբանական երեւոյթը դիտելու համար: Նայելով իր
առջև փռուած ձիւնապատ դաշտին, դեռահաս աղջկան թուում էր
թէ ամբողջ անցեալը անհետացել է այս սպիտակ ծածկոյի տակ:
Մի ժամ առաջ գետնի վրայ թողած նրա ոտների հետքերը բո-
լորովին ոչնչացել էին, գորշագոյն չրջապատը, որի վրայ յենուել
էր կապիտանի հետ խօսելիս, այժմ սպիտակ էր, անբիծ, մինչև
անգամ սրահի ուրուագիծը ընդունում մի ինչ որ տարօրինակ,
աղօտ, տեսիլական կերպարանք: Եղել է արդեօք ինքը այստեղ,
տեսել է արդեօք կապիտանին թէ՛ այս ամենը միայն երազ էր:
Նա չէր կարող ասել:

Յանկարծ քամու սաստիկ բռնկումը թրխկոցով ծածկեց
դուռը, և միսս Բլուսօմը յետ ցատկեց երկիւղից: Բարօնը բռնեց
նրա մէջքից ու ազատեց, Աստուած գիտէ թէ ինչ երևակայական
վտանգից: Այս տեսարանը վերջացաւ դեռահաս աղջկայ նեար-
դային ծիծաղով, բայց քամին աւելի ու աւելի սաստիկ էր
փչում, և բարօնը հարկադրուած էր աւելի ապահովութեան հա-
մար աւելի ամուր սեղմել նրան դէպի իրան:

Մենակ էին՝ բնութեան ու պատահականութեան կամքին
յանձնուած: Կիտխաւարի մէջ աղջիկը բարօնի վրայ ձգեց իր
կօկէտ հայնացքները և զարմացաւ, տեսնելով, որ նրա աչքերը
նայում էին իր վրայ լրջմտութեամբ և քնքշութեամբ: Նա իրան
մի տեսակ տարօրինակ զգաց, քաշուեց, և երբ երիտասարդը
կռնալով հպեց նրա շրթունքներին, նա մի բոպէ մարեց,
բայց յետոյ, կայծակի արագութեամբ, ապտակ տուեց նրան և
անհետացաւ չրջապատող մթութեան մէջ: Մի քանի բոպէից
միստեր Բլուսօմը բաց արաւ յետևի դուռը և, իր մեծագոյն զար-
մանքին, տեսաւ բարօնին մենակ: Նրանք վերադարձան երկու-
սով հիւրատուն և այստեղ գտան արդէն Տանկֆելլային, որը վե-
րադարձել էր առջևի դռնով:

Միւս առաւօտ Բլուսօմը վաղ բաղնից աղջկայ դուռը և,
նկատելով, որ նա հագնուած է, թէև մի փոքր գունատ և
մոայլադէմ, ասաց.

— Եթէ դու այսպէս վաղ ես վեր կացել, Տանկֆելլա,
աւելի քաղաքավարի կը լինէր, որ բարի ճանապարհ ցանկայիր
հիւրերին, մանաւանդ բարօնին, որը, երևում էր, շատ էր
ափսոսում քո բացակայութեան վրայ:

— Այս ո՞ր ժամանակից ի վեր է, որ ես պարտաւոր եմ
պար գալ ամեն մի յիմարի առջև, որի մտքին կը փչի իշկանել
ձեր տանը, — պատասխանեց դեռահաս աղջիկը, բորբոքուելով:

—Նա շատ սիրալիր էր քեզ հետ, նա ազնուատում ջենտլմէն է:

—Ի՞նչ ասեմ, լաւ ջենտլմէն է:

—Հօ իրան չը մոռացաւ քեզ հետ,—հարցրեց անսպասելի կերպով ծերունին, ուղղելով աղջկայ վրայ իր գորշագոյն, սառը աչքերը:

—Ո՛չ, ո՛չ,—պատասխանեց Տանկֆելլան, նորից կարմրելով պատի պէս,—բայց ի՞նչ է այդ ձեռքերիդ, նամակ:

—Այո, հաւանական է՝ կապիտանից,—ասաց Բլոսօմը, տալով աղջկան երեք տակ ծալուած տոմսակը,—այս նամակը մի զինուոր բերեց Մաքումդ պահիր, Տանկֆելլա, իմ խորհուրդը: Կապիտանը քո հատը չէ:

Գեռահաս աղջիկը գունատուեց և առաւ նամակը արհամարհական ժպտով, իսկ երբ հայրը դուրս գնաց սենեակից, նրա դէմքին կրկին երևաց կարմրութիւն: Պատուելով նամակը, նա կարդաց հետեւեալը:

—Իմ սրտիս գանձ, ես ստորաքարչ նախանձի ազդեցութեան տակ գործող բռնակալի կալանաւորն եմ: Անցեալ գիշեր ինձ ձերբակալեցին խօսքի ու մտքի ազատութեան համար, որին ես արդէն այնքան զոհ եմ բերել ամենը, ինչ որ կարող է զոհել մի մարդ, բացի սիրուց ու պատուից: Եթէ իշխանութեան ամրապնդման համար ժողովրդի բոլոր ազատութիւնները ենթարկուած են մէկ մարդու զինուորական ոյժին ու անձնասիրութեանը, տէրութիւնը կորած է: Ես գտնուում եմ անարդ բանտարկութեան մէջ, մեղադրուելով իշխանութիւնը չը յարգելու համար, թէև մէկ տարի առաջ թողի իմ քաղաքն և յարգուած բարեկամներին հայրենիքիս ծառայելու համար: Հաւատացէք ինձ, որ ձեզ սիրում եմ, չը նայելով որ գտնուում եմ բռնակալների ձեռքին և գուցէ զլուխս գնեմ կառափման տեղում: Այս նամակը ձեզ հասցնող մարդը հաւատարիմ ու անձնանուէր մարդ է, այնպէս որ կարող էք նրա ձեռքով առարկել ինչ որ կամենում էք: Ձեր ձեռքերով ու սիրով նուիրագործուած անուշեղէնը խեցին ինձանից բռնակալի վարձկանները, իսկ ապուխտը հաւանական է՝ զօրապետի խոհանոցն է ընկել: Ահա թէ ի՞նչ է նշանակում բռնակալութիւնն—անձնասիրութիւնը: Մնաք բարով, սրտիս գանձ:

Ալլան»

Միսս Բլոսօմը կարգաց այս ձոռումբան, անգրագէտ նամակը մի քանի անգամ և պատառ պատառ արաւ: Յետոյ նրա մտքով անցաւ, որ այս կապիտանի առաջին նամակն է, որն

ինքը չէ պահպանել, և սկսեց հաւաքել նրա կտորտանքը, բայց մի քանի ժամանակից յետոյ ձմրտեց ու դուրս շարտեց պատուհանից:

Ամբողջ օրուայ ընթացքում նա շատ ցրուած էր և մինչև անգամ սովորականից քմահաճ. միայն, երբ հայրը գնաց Մօրիստաուն, նա մի փոքր հանգստացաւ: Կէսօրից յետոյ ձիւնը դադարեց ու փոխուեց անձրևի: Գեռահաս աղջիկը վրազուեց տնտեսութեամբ, որ այդ օր ունէր նրա համար ինչ որ նոր նշանակութիւն: Այս հոգսերի մէջ հասաւ երեկոն, և նա չը լսեց ձիերի տրոփիւնը բակում և ձայների աղմուկը դաշտում: Գուցէ նա դիտմամբ ուշադրութիւն չը դարձրեց այս բանի վրայ, որովհետև Բլոսօմի ազգարակը շարունակ ապաստան էր ծառայում անցեալ դօրքի և կարաւանի համար: Գեներալ Սուլիմանը ու գընդապետ Համիլտօնը յաճախ կանգ էին առնում ազգարակում ձիերը ջրելու համար իրանց հետախուզութիւնների ժամանակ:

—Միսս Տակֆելլա,—բացականչեց ազգարակում ծառայող երիտասարդ նեգրը, արթնացնելով գեռահաս աղջկան մոռացութիւնից,—զինուորներ են կանգնել մեր ազգարակում օրը անցկացնելու. նրանք ամբողջ տան մէջ կարգադրութիւններ են անում, իսկ սպան հիւրատանը գիրք է կարդում, ձգուելով բազկաթոռի մէջ և ոտները սեղանի վրայ դնելով:

Գեռահաս աղջկայ այտերը ալ կտրուեցին և նա յօնքերը կիտեց: Նա վեր ցատկեց. սա էլ առաջուայ քմահաճ, թեթեւամիտ աղջիկը չէր, այլ խոցուած աստուածուհի: Ձեռքով հրելով նեգրին ձանապարհից նա վեհութեամբ իջաւ սանդուխով ներքև և բացեց հիւրատան դուռը:

Բուխարու առաջ, հանդիստ բազկաթոռի մէջ ձգուած, նըստած էր մի սպա: Տեսնելով գեռահաս աղջկան, նա շտապով վեր թռաւ սաստիկ շփոթուած:

—Ներեցէք,—ասաց նա խոնարհ գլուխ տալով,—չէի կարծում, որ տանը մէկը կայ, մանաւանդ տիկինս. ես մայօր վան-Յանդտ եմ: Ո՞ւմ հետ պատիւ ունեմ խօսելու:

—Տանկֆելլա Բլոսօմ,—պատասխանեց գեռահաս աղջիկը, տեսնելով մայօրի դէմքից, որ իր գեղեկութիւնը նրա վրայ մեծ տպաւորութիւն է արել:

—Տանկֆելլա Բլոսօմ,—կրկնեց սպան, կրկին ցոյց տալով յուզմունք,—դուք Աբնի Բլոսօմի աղջիկն էք:

—Ի հարկէ,—արտասանեց նա,—հայրս գնացել է Մզրիստաուն և շուտով կը վերադառնայ:

—Նա չի վերադառնայ ոչ այսօր, ոչ էլ վաղը, միսս Տանկֆելլա,—ասաց լրջօրէն սպան.—նա կալանաւորուած է:

—կալանաւորուած, ինչի համար,—բացականչեց Տանկֆելլան, հպարտ, կռուի կանչող հայեացք նետելով:

—Թշնամիներին ու լրտեսներին գործակցելու և թագցնելու համար:

Դեռահաս աղջիկը բոցավառուեց. նա յիշեց բարձր նախորդ օրը յափշտակած համբոյրը, և այնպէս ամօթ զգաց, կարծես առջեր կանգնած սպան այն տեսարանին վրայ էր: Սպան նկատեց նրա խռովութիւնը, բայց բացատրեց բողբոջին այ կերպով:

—Եթէ այդպէս է,—պատասխանեց Տանկֆելլան ձայնը բարձրացնելով.—ես էլ պէտք ձեռքակալուեմ. հօրս հիւրերը և իմ հիւրերն են, տան մէջ ես եմ տանտիրինը և յօժարութեամբ ընդունում էք այն պատուաւոր ջենտլմէններին: Ասենք՝ նրանք լրտեսներ են, բայց նրանք չէին վիրաւորել մի անօգնական օրիորդի. ոտները չէին դնել սեղանի վրայ և հիւրատունը ախոռատուն չէին դարձնել:

Մայրի զէմբը արտայայտեց միաժամանակ թէ հաճութիւն և թէ վիշտ, բայց պատասխանելու փոխարէն նա լուռ գլուխ տուեց, որով աւելի կատաղեցրեց միսս Բլօսօմին:

—Իսկ ասացէք, խնդրեմ, ովքեր են այդ լրտեսները և ով է մատնիչը.—հարցրեց նա, համարձակ նայելով սպայի աչքերին,—կարծեմ, մենք պէտք է գիտենանք, երբ և ինչպէս ենք նրանց ընդունել:

—Ձեր հօրը, միսս,—ասաց մայրը,—վաղուց է որ կասկածում են թշնամիներին համակրելու մէջ, բայց զօրապետը մինչև այսօր ուշադրութիւն չէր դարձնում զօրքի մէջ չը ծառայող քաղաքացիների քաղաքական հայեացքների վրայ և աշխատում էր մեր կողմը գրաւել նրանց ազատամիտ արտօնութիւններով: Սակայն, նորերս յայտնուեց որ երկու օտարականներ, թէև զօրապետից անցաթուղթեր ստացան, յաճախ այցելում էին ձեր տունը կեղծ, հնարովի անուններով:

—Դուք ասում էք կոմս Ֆերդինանդի ու բարձր Պոմպոզայի մասին,—ընդմիջեց նրան Տանկֆելլան.—ձեզ ինչ գործ, եթէ երկու աղնուատում ջէնտլմէններ պատուում են մի դեռահաս աղջկայ շուրջը, որը գուցէ նշանաւոր ծագումնից չէ, բայց ազնիւ է...

—Յարգելի միսս Տանկֆելլա—բացականչեց մայրը խոնարհ գլուխ տալով և ժպտալով, որից դեռահաս աղջիկը պարտաւ էր ճաքելու,—ապացուցէք այդ իրողութիւնը,—իսկ այս դժուար չէ ձեզ համար, ձեր գեղեցկութեամբ հանդերձ,—և միստեր Բլօսօմին իսկոյն կազատեն: Զօրապետը ջենտլմէն է,

ինքն էլ ենթարկում է կանացի ազդեցութեանը և երբէք թեթեւամտութեամբ չէ վերաբերուել այս ազդեցութեանը:

—Իսկ մատնիչն ով է,—հարցրեց բարկութեամբ Տանկֆելլան—ով համարձակուեց...

—Մատնիչը ինքն էլ ձեռքակալուած է. կապիտան Ալլան Բրիւստերն է, Կօնեկտիկուտի գնդից:

Տանկֆելլան գունատուեց, յետոյ բորբոքուեց և նորից գունատուեց:

—Այդ սնու է, ստորաքնարչ սուտ,—ասաց նա, մօտենալով մայրին:

Վան-Յանդտը լուռ գլուխ տուեց: Դեռահաս աղջիկը շտապով վեր վազեց իր սենեակը և մի քանի րոպէից վերադարձաւ ամազօնուհու զգեստը հագին և գլխարկով:

—Կարող եմ հօրս մօտ գնալ,—հարցրեց նա, աչքերը սպայի վրայ չը բարձրացնելով:

—Դուք ազատ էք թուզակի պէս, միսս,—պատասխանեց մայրը,—ինձ ոչ թէ միայն չէ հրամայուած ձեզ ձերբակալել, այլ նոյն-իսկ ձեր անունը յիշուած չէ հրամանագրիս մէջ: Թոյլ տուէք ինձ ճանապարհ ձգել ձեզ մինչև ձին:

Տանկֆելլան ոչինչ չը պատասխանեց և դուրս գալով հանդիսաւոր մուտքից թռաւ ձիու մէջը, արհամարհանքով խոյս տալով մայրի մեկնած ձեռքից:

—Սպասեցէք մի վայրկեան, միսս Բլօսօմ,—ասաց նա, բռնելով նրա ձիու սանձից:

—Թողէք,—աղաղակեց աղջիկը բարկացած:

—Մի վայրկեան,—կրկնեց մայրը, բայց չը թողնելով սանձը ձեռքից:

Չին ծառս եղաւ, քիչ մնաց հեծնողին վայր էր ձգում: Տանկֆելլան չարութիւնից ալ կտրուեց և ամբողջ ոյժով զարկեց մըտրակով յանդուզն սպայի երեսին: Սա իսկոյն բաց թողեց ձեռքից սանձը: Նրա զէմբը գունատ էր, բայց հանդիստ, չը նայելով այն կարմիր դժին, որը խազել էր նրա զէմբը քունքից սկսած մինչև կզակը:

—Ես բոլորովին չէի ուզում ձեզ պահել,—ասաց նա ցածր, բայց կամենում էի ձեզ խնդրել որ խօսելով գնեքալ Վաշինգտօնի հետ դուք ասէք, որ մայր Վան-Յանդտը չը գիտէր որ դուք տանն էք, մինչև որ դուք երեւայիք հիւրատանը, և այն ժամանակ նա վարուեց ձեզ հետ, որպէս վայել է սպային և ջենտլմէնին:

Ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով նրա խօսքերի վրայ, Տանկֆելլան արագ սլացաւ, իսկ մայրը վերադարձաւ տուն:

Այս տեսարանին ներկայ գտնուող մի քանի սպաները չուռ եկան իրանց սպայից, որը այսպիսի վիրաւորանք էր ստացել, և երբ նա անհետացաւ, սկսեցին բարձր ձայնով իրանց կարծիքը յայտնել:

—Տօրիական *) սատանան կատաղում է որ չէ կարող մայօրին էլ խելքահան անել, ինչպէս որ խելքահան է արել կապիտանին,—նկատեց սերժանտ (աւագ-զինուոր) Տօրիներ:

—Պնաց բախտը փորձելու գեներալի մօտ—աւելացրեց զինուոր չիկատ:

Գուցէ, այս երկու քննադատները սխալուում էին: Գլխապատռ սլանալով Մօրիստաունի ճանապարհով, Տանկֆելլան մտածում էր շատ բաների մասին: Նախ և առաջ նրա մտքերը կանգ էին առնում Ալլանի վրայ, որը ի հարկէ սպասում էր իր օգնութեանը. բայց ինչպէս է համարձակուել նա մտնել կամ կասկածել իրան: Յետոյ դառնութեամբ մտածում էր կոմսի ու բարձնի մասին և փափագում էր երես առ երես հանդիպել վերջինիս հետ և ուղղակի մեղադրել նրան, որ նա էր իր բոլոր անբախտութիւնների ու ստորութիւնների պատճառը: Վերջապէս նա սկսեց մտածել իր հօր մասին և այս բոլորներին առում էր ամենքին: Բայց ինչի մասին էլ մտածէր,—երկիւղ էր կրում իր հօր համար, զայրանում էր բարձնի վրայ, թէ անհամբերութեամբ սպասում էր Ալլանի հետ տեսակցութեան,—մի պատկեր չարունակ կանգնած էր նրա աչքերի առաջ—մայօր Վան-Յանդտի գեղեցիկ, գունատ դէմքը կարմիր սպին դէմքի մի ծայրից մինչեւ միւսը:

III

Միս Բլօսօմի շառատ ձիուց շատ աւելի արագ սլացող քամին մրրիկի փոխուեց, երբ աղջիկը հասաւ Մօրիստաուն: Նա ղօղանջում էր թիկնների տերևազուրկ կատարների մէջ, սուլում էր թէղօջների չոր ձիւղերի մէջ, հառաչում էր պրես-ւիտերեանական խաղաղ գերեզմանատանը, կարծես ճիգ թափելով մեռելներին արթնացնելու, երբում էր վարագոյրները Հասարակաց ժողովարանի պատուհաններում, որտեղ նախորդ օրը լայն շրջագլխատները հագին գեղեցկուհիք և կարճ ու նեղ վարտիկաւոր կաւալերները հանդիսաւոր կերպով սպրում էին

*) Տօրի կոչում է անգլիական պահպանողական կուսակցութիւնը: Ամերիկական պատերազմի ժամանակ Անգլիացում կառավարում էին տօրիները:

հնադարեան անգլիական պարը ռէքր Ռօջեր-դը-Կովերլի» երգի եղանակով: Բայց Ֆօրդի ամրոցի շուրջը, որտեղ գտնուում էր զօրապետի գլխաւոր դիւանատունը և կացարանը, քամին ամենահրէշաւոր կատաղութեանն էր հասել: Մոնչոււմ էր, թնդում, սուլում էր և վայրահաջ ունում հնադարեան, քառանկիւնի, լայնանկար, տգեղ ամրոցի ժանիքների, դուրս ցցուած անկիւնների ու ճեղքերի մէջ: Ֆօրդեան ամրոցը մի լեռնային, դէպի Վիպանի գետը դիք իջնող լանջի վրայ էր կանգնած, և այս պատճառով բնական էր, որ Մօրիստաունի ֆերմերի պատշգամբների տակ մեղմ շնչող, խաղաղ քամին դառնում էր մի ուժգին հողմ, որից դողդողում էին բոլոր պատուհաններն ու դռները, իսկ ձմեռային քամին իսկոյն փոխուում էր մրրիկի, որ սպասում էր երկրի երեսից ջնջել հինաւուրց բնակարանը: Նրա սինազարդ մուտքի առջև դանդաղ անց ու դարձ անող պահպան զինուորը փորձով գիտէր, որտեղ էր քամուն ենթարկուած կողմը, և այստեղին մօտենալիս, խնամքով փաթաթուում էր իր թիկնոցի մէջ, որը մի թոյլ պատան էր սուր, հիւսիսային քամուց:

Տան ներսն էլ տիրում էր հիւրընկալութեան և յարմարութեան միևնոյն բացակայութիւնը: Ամբողջ տուն պաշարող ցուրտ, ճգնաւորական խաւարը հազիւ խանգարուում էր ընդունարանի բուխարու մեղմ կրակով և սեղանատան օջախում հանգչող ածուխների պսպղումով: Հիւսուած աթոռներով շատ պարզ կահաւորուած ընդունարանում գրեթէ նիրհում էր զօրապետի սևամորթ թիկնապահը, իսկ սեղանատանը բուխարու առջև շնչալով խօսում էին երկու սպաներ, վախենալով խանգարել հարևան հիւրատան տիրող լուծիւնը, քանի որ այնտեղ տանող դուռը բաց էր: Բուխարու կրակի դողացող լոյսը աղօտ լուսաւորում էր հիւրատան սև, ողորկած կահ կարասիքը, գրքերի հնադարեան պահարանը, մեծ քառանկիւնի սեղանը, անխօս ճախարակը և բուխարու մօտ նստած անչարժ կերպարանքը:

Այս կերպարանքը այն աստիճան ծանօթ է ամբողջ կրթուած աշխարհին, անթիւ գրչանկար ու վրձնանկար պատկերների շնորհիւ, որ հարկ չը կայ այստեղ նկարագրելու: Մեղմութիւնն և ոյժը, փիլիսոփայական համբերութիւնն ու հաստատաւորութիւնը սակաւադէպ կերպով միանալով նրա մէջ, ներկայացնում էին մի տիպար, որը վերջը յաճախ ժպիտ էր յարուցանում մեր ժողովրդի շրթունքներին, որովհետև այս ժողովուրդը առհասարակ աչքի չի ընկնում հոգեկան յատկութիւնների այսպիսի միացմամբ, որի խորին իմաստը լիովին հասկանալի էլ չէ նրան: Եւ իրան, մինչև անգամ իր արտաքի-

նով, ֆիզիկական գծերի, շարժումները ու նոյն-իսկ հագուստի հաւասարակշռութեամբ այս կերպարանքը ցոյց էր տալիս իր սակաւագիւտ և բացառիկ լինելը: Նրա ամբողջ էութեան մէջ ակամայ նկատուում էր մի պսակակիր, որը, ճակատադրի ծաղրով, կռիւ էր մղում պսակակիրների դէմ, մարդկանց մի հրամանատար, որը սպքի էր կանգնել պաշտպանելու՝ նոյն այդ մարդկանց ունեցած ինքնագլուխ հրամայելու իրաւունքը, բայց որը միևնոյն ժամանակ հրամայում էր իր բնածին իրաւունքով: Նրա գլխի գագաթից սկսած մինչև կօշկի արծաթէ ճարմանդը, այնքան վեհ, այնքան արքայական բան կար, որ զարմանալի չէ, եթէ Գէորգ Անգլիականն ու Հանովերականը նրա հետ կռուելու համար լաւագոյն միջոց էին համարում այն արհարմարհան կան ժպիտը, որով գոչում էին նրան «պ. Վաչինգտօն»:

Նա խորատուգուած էր այնպիսի խոր մտածմունքի մէջ, որ գլուխը չը բարձրացրեց, երբ փողոցում լուսեց ձիու ոտնաձայնը և հնչեց սկզբում պահապանի կոչը, յետոյ հերթապահ սպայի հարցաքննութիւնը, դրսի դռան ճռոցը, կանացի զգեստի սօսափիւնը և ձայների շշուշը ընդունարանում: Վերջապէս, մինչև անգամ երիտասարդ սպայի հիւրատուն մտնելն ու զօրապետի հէնց բազկաթոռին մօտենալը չը սթափեցրեց նրան:

— Ներեցէք, գեներալ, — ասաց սպան անվճռական ձայով, — բայց...

— Ոչինչ, գնդապետ Համիլտօն, — պատասխանեց հանդիստ կերպով Վաչինգտօնը: — դուք ինձ չը խանդարեցիք:

— Մի մատաղահաս տիկին կամենում է ձեր գերագանցութեանը տեսնել, միսս Տանկֆելլա Բլոսօմը, այն Աքներ Բլոսօմի աղջիկը, որը մեղադրուած է դաւաճանելու ու թշնամիների գործակցելու մէջ, և այս բանի համար այժմ ձերբակալուած է:

— Տանկֆելլա Բլոսօմ, — կրկնեց հարցական եղանակով Վաչինգտօնը:

— Ձեր գերագանցութիւնը երեի յիշում էք այն դաւաճական գեղեցկուհուն, Մօրիստաունի Կրեպիդին, որը ճանապարհից հանել է Կօնեկտիկուտի քաջ կապիտանին...

— Դուք, գնդապետ, որպէս երիտասարդ մարդ, աւելի լաւ պէտք է յիշէք, — պատասխանեց Վաչինգտօնը ուրախ ժպիտով, որը կարմրացրեց ազիւտանտին, — բայց իրաւ է, ես յիշում եմ այդ պատմութիւնը: Հրաւիրեցէք նրան այստեղ ուղեկցի հետ միասին:

— Նա մենակ է, գեներալ:

— Առաւել ևս սիրալիր պէտք է լինէ՞ք նրա հետ, — ասաց

Վաչինգտօնը վեր կենալով և ուղղելով շապկի թեւքերը, — սալասել մի տաք նրան, գնդապետ, և թող այստեղ մտնի, ինչպէս եկել է, մենակ:

Ազիւտանտը գլուխ տուեց և սենեակից դուրս գնաց: Մի րոպէից դռան երկու կէտերը բացուեցին միսս Տանկֆելլա Բլոսօմի առջև:

Այնպէս գեղեցիկ էր իր պարզ՝ ամազօնուհու հագուստով, այնքան ինքնօրինակ էր նրա գեղեցկութիւնը և այնպիսի անկեղծ վճռականութիւն և հաստատակամութիւն էր բուրում նրա ամբողջ էութիւնից, որ նրան դիմաւորող լրջմիտ, մտախոհ գեներալը չը բաւականացաւ սովորական ողջոյնով, այլ մի քանի քայլ արեց նրան դիմաւորելու և, պատկառանքով առնելով նրա ստոած ձեռքը, մօտեցրեց բազկաթոռին, որից նոր էր վեր կացել:

— Եթէ նոյն-իսկ չը գիտենայի ձեր անունը, միսս Տանկֆելլա, — ասաց նա հանդիսաւոր քաղաքավարութեամբ, — կարծում եմ, բնութիւնը ինքը հոգ է տարել ներկայացնելու ձեզ ամեն ջանտրմէնին լաւագոյն կողմից: Ինչով կարող եմ ծառայել ձեզ:

Աւանդ, դեռահաս աղջկայ շագանակագոյն աչքերի լուսաճահանչ փայլը մարեց զօրապետի հիւրատան կիսախաւարի մէջ և նրա վեհ, պատուելի անձնաւորութեան առջև: Պայծառ շիկնութիւնը, որը նրա այտերն էր ծածկել ներքին յուզմունքից ու քամու հետ մղած արտաքին կռուից, գրեթէ բոլորովին անհետացաւ: Սրտի մէջ եռացող չարութիւնն ու բռնակալ զօրապետին կծու խօսքեր ասելու վճռականութիւնը բոլորովին ոչընչացան նրա ներկայութեամբ, և Տանկֆելլան մեծ դժուարութեամբ զսպում էր արտասուքները, որոնք ակամայ երեւացին նրա գեղեցիկ աչիկների մէջ, երբ նա տեսաւ Վաչինգտօնի իր վրայ ուղղուած ուշադիր, հանդիստ հայեացքը:

— Հասկանում եմ ձեր այցելութեան պատճառը, միսս Տանկֆելլա, — շարունակեց նա մի այնպիսի հասարակ, բարի ձայնով, որ խիստ տարբերում էր այն ժամանակուայ սովորական, աշխարհիկ վարուողութիւնից կանանց հետ, — այդ պատիւ է բերում ձեզ: Աղջկայ հոգսը հօր մասին, որքան էլ հայրը մոլորուելիս լինէր, լիովին յարգելի է:

Դեռահաս աղջկայ աչքերը փայլեցին, մի րոպէ առաջ դողադաջող չրթունքները ծալուեցին հպարտ, արհամարհական ժպիտի և նա համարձակութեամբ, բարկութեամբ ասաց, նայելով ուղղակի զօրապետի աչքերին:

— Հօրս մասին չէ, որ ուզում եմ խօսել ձեզ հետ: Նրա

համար չէ որ եկել եմ այստեղ մենակ, զիչերով, այս մրրիկին: Նա կարող է ինքը պաշտպանուել: Եկել եմ իմ մասին խօսելու, այն ստորաքարչ զրպարտութեան ամբողջ անհետեւութիւնը ցոյց տալու, որ բարձուած է ինձ վրայ, մի խեղճ ջահիլ աղջկայ վրայ, և նրա համեստ երկրպագուի, կապիտան Բրիւստերի վրայ: Նրան ձեռքակալել են նրա համար, որ սիրում է ինձ, Տանկֆելլա Բլուսմին, որը աչքի չի ընկնում քաղաքական ձեռքատումներով և բուն նախանձախնդրութեամբ դէպի ձեր գործը, կարծես նա պարտական է ձեզանից կամ լեզի Վաչինգտօնից թոյլտուութիւն հարցնելու սիրահարուելու համար:

Նա մի բոպէ կանգ առաւ շունչ քաշելու համար և զուտ կանաչի բնազդով նկատեց, որ զօրապետի դէմքին տեղի ունեցաւ յանկարծակի փոփոխութիւն, ինչ որ սառն խստութիւն երևաց նրա վրայ: Բացց կանաչի յամառութեամբ, որին աւելորդ չէր լինի որ երբեմն հետեւէինք և մենք, տղամարդիկս, նա չը լռեց, այլ սրտից զուրս թափեց ամենը, ինչ որ գուցէ մի ժամից յետոյ ինքը ստիպուած պիտի լինէր յետ առնել կանաչի անյաջորդականութեամբ: Համարձակուած եմ աւելացնել, որ թոյլ սեռի այս յատկութիւնն էլ հարկաւոր է որ երբեմն փոխ առնի ուժեղ սեռը:

— Ասում են, իբր թէ իմ հայրը, — շարունակեց շտապով Տանկֆելլան, — ընդունում էր իր տանը լրտեսներին, որոնց ես — ներողութիւն եմ ինզրում ձեզանից, դեներալ, և վեհաժողովից, — համարում եմ պատուաւոր, բոլորովին ազնուաբար իմ յետեւից ընկած ջենտլմեններ: Ասում են, այսինքն՝ ամենայն ստորաքարչութեամբ սուտ են խօսում, իբր թէ իմ երկրպագուն, կապիտան Ալլան Բրիւստերն է մասնել հօրս: Եկել եմ այստեղ այս տեսակ զրպարտութեան դէմ բողոքելու, պահանջում եմ ձեզանից, դեներալ, որ դուք քաղաքականութեանը զո՞ն չը բերէք ազնիւ աղջկայ անունը: Ամօթ, անխիղճ բան է աւազակների մի խումբ ուղարկել ազնիւ ազարակատիրոջ տունը լրտեսելու, այնպէս որ խեղճ օրիորդը պէտք է փախչի այնտեղից: Այն, սվքեր են նրանք, եթէ ոչ լրտեսներ:

Իրան հասցրած վիրաւորանքների յիշատակից զայրացած, նա համարձակ, յանդուգն կերպով բարձրացրեց իր կարմրատակած, դուրալի դէմքը և այն աստիճան մօտեցաւ մեծ քաղաքացուն, որ երկուսի դէմքերի մէջ երկու բթաչափից ոչ աւելի տարածութիւն կար: Նրա մեծագոյն զարմանքին, Վաչինգտօնը կամաց կոսարեց զլուխը և սառնասիրտ կերպով համբուրեց նրա ճակատը:

— Նստեցէք, խնդրեմ, միաս Բլուսմ, — ասաց նա հանգիստ

ձայնով, և բռնելով ձեռքից, նստեցրեց բազկաթոռի մէջ, — հանգստացէք և ուշադրութեամբ լսեցէք ինձ: Սպան, որին յանձնել եմ ձեր հօր ազարակը գրաւել, իմ աղիւտանան է և ջենտլմէն մէկը: Եթէ նա այն աստիճան մոտացել է իրան, այն աստիճան ստորացրել է իրան և ինձ իր անձի մէջ...:

— Ո՛չ, ո՛չ, — բացականչեց Տանկֆելլան տենդային աճապարանքով, — այդ ջենտլմէնը բոլորովին քաղաքավարի էր ինձ հետ. ընդհակառակը գուցէ ես...:

Նրա երեսը ամբողջովին բորբոքուեց և չէր կարող նախադասութիւնը վերջացնել, այնպէս կենդանի գծերով ներկայացաւ իրան մայօրի դէմքը՝ մտրակից ստացած կարմիր սպիտով:

— Հաւատացած եմ, որ մայօր Վաչ-Յանգտը, իբրև ջենտլմեն, գիտէր ներել աղջկայ բնական բարկութիւնն ու զայրոյթը հօր ձեռքակալութեան լուրը առնելիս, — ասաց Վաչինգտօնը, պարզորոշ արտայայտելով իր հայեացքով որ հասկացել է Տանկֆելլայի անխօս խոստովանանքը, — բայց թոյլ տուէք ինձ պարզել ձեզ մի ուրիշ հանգամանք, որի մասին մենք կատարելապէս հակառակ կարծիքի ենք:

Նա մօտեցաւ դռան և, կանչելով ծառային, մի ինչ-որ բան ասաց կիսաձայն: Մի քանի բոպէից յետոյ այն երիտասարդ սպան, որը յայտնել էր զօրապետին Տանկֆելլայի գալուստը, ներս մտաւ սենեակը պաշտօնական թղթերի մի կապոցը ձեռքին: Կիսազուսպ ժպիտով նա նայեց դեռահաս աղջկան, կարծես լսել էր նրա ամբողջ խօսակցութիւնը դեներալի հետ և նկատել էր այս տեսարանի մէջ նրա ծիծաղաշարժ կողմը, որը գուցէ խուսափում էր գործող անձանց ուշադրութիւնից:

Սակայն, կանգնելով զօրապետի առջև, գնդապետ Համիլտօնը լրջմտութեամբ սկսեց թղթերը թերթել: Տանկֆելլան շքութունները կծոտում էր անխօս շփոթութեան մէջ: Մի ինչ-որ անյայտ երկիւղ և մի՞ իր համար անպատուութիւն բանի նախազգացում յանկարծ տիրեցին համարձակ օրիորդի սրտին. նրա մէջ առաջին անգամ զարթեց այն դիտակցութիւնը, թէ ինքը անօգնական է, մենակ այս երկու պատերազմիկ, արիասիրտ անձնաւորութիւնների և՛ աննկատելի կերպով հակառակ դռնից սենեակը մտած երկու կանանց մէջ, որոնք հեռուից նայում էին նրան այնպիսի հետաքրքրութեամբ, կարծես նա մի հազուագիւտ տեսիլ լինէր: Այս ամենին աւելացաւ և այն անհանգիստ միտքը, թէ իր ամբողջ կենսքը և իր ամբողջ երջանկութիւնը կախուած էին յաջորդ մի քանի վայրկեաններից:

— Ահա մեղադրական կէտերը, — ասաց Համիլտօնը, տա-

լով Վաչինգտոնին թղթերից մէկը և միաժամանակ բազմանիշ հայեացք նետելով ներս մտած տիկիններից մէկի վրայ:

—Կարգացէ՛ք,—ասաց զօրապետը սառնութեամբ:

Կատարելապէս հասկանալով, որ իրան լսողը միայն միսս Բլուսմը չէ, Համիլտոնը կարգաց թուղթը: Թղթի լեզուն սեղմուած, զինուորական-դատաստանական էր և նրա մէջ պարզ, համառօտ կերպով ասուած էր, որ թուղթը ստորագրողին անձամբ ծանօթ ազարակատէր Աքներ Բլուսմը յաճախ ընդունում էր իր տանը երկու ջենտլմէնների, կոմս Ֆերգինսոնին ու մարկիզ պօմպօզային, որոնք կասկածելի անձնաւորութիւններ են, իբրև ազգային գործի թշնամիներ և ցամաքային զօրքի մասին հակառակորդին տեղեկութիւններ հաղորդողներ: Թուղթը ստորագրուած էր Ալլան Բրիւստերի, Կոնեկտիկուտի գունդի նախկին կապիտանի ձեռքով: Համիլտոնը ցոյց տուեց Տանկֆելլային այս ստորագրութիւնը, և դեռահաս աղջիկը իսկոյն ձանաչեց իր երկրպագուի ծանօթ ձեռքը:

Նա վեր կացաւ: Աչքերի մէջ այժմ նոյնպէս պարզ նկատուում էին շիտթութիւն ու կոկիծ, ինչպէս մի բոպէ առաջ զայրոյթ: Բայց այնուամենայնիւ նա համարձակ տարաւ բոլորներկայ եղողների հայեացքները, թէեւ գուցէ աւելի թշնամանք էր զգում կանանց անխօս ներկայութեան, քան թէ տղամարդկանց ամենաարհամարհական քննադատութեան մէջ:

—Ի հարկէ,—արտասանեց մի ձայն, որը Տանկֆելլան կանացի անսխալական ընազդով վերագրեց տիկիններից աւագին, որը օրինական իշխանութիւն ունէր ներկայ եղող տղամարդկանց մէկի խղճմտանքի վրայ,—միսս Տանկֆելլան կընտրի իր երկրպագուներէրից, հայրենիքի թշնամիներից մէկին և արդէն նրա մէջ պաշտպանութիւն կորոնի իր նեղ վիճակի մէջ, քանի որ նա, ինչպէս երեւում է, աչքի չէ ընկնում բացառապէս մէկին համակրելովը և ոչ ոքից չէ խնայում իր բարեհաճ ուշադրութիւնը:

—Գոնէ, լեզի Վաչինգտոն, նա իր ուշադրութիւնը չի պարգեւի մի մարդու, որը նրան դաւաճանել է,—ասաց տաքտաք դեռահաս աղջիկը և, նկատելով, որ զօրապետն ու իր կինը զարմանքով իրար նայեցին, շտապով աւելացրեց,—ներեցէք ինձ, միլեդի, իմ համարձակ կարծիքը:

—Ով որ դաւաճանում է իր հայրենիքին, նա հեշտութեամբ կարող է դաւաճանել և իր սիրոյն,—սառն կերպով նկատեց լեզի Վաչինգտոնը:

—Հէնց այդպէս կարելի է ասել նաև՝ ով որ դաւաճանում է իր թագաւորին, կը դաւաճանի և իր հայրենիքին,—

կտրեց Տանկֆելլան, կոռուի հրաւիրող հայեացք նետելով լեզի Վաչինգտոնի վրայ, բայց սա արժանաւորութեամբ երեսը շուտուեց նրանից, և դեռահաս աղջիկը, դիմելով զօրապետին, հպարտ-հպարտ շարունակեց,—ներեցէք, որ ես ձեզ անհանգիստ արի, բայց կարծում եմ, որ եթէ իմ երկրպագուն խանդոտութիւնից ինձ ծանր հարուած է հասցրել, այս բանը բոլորովին իրաւունք չէ տալիս ուրիշներին ինձ դատապարտելու, թէկուզ այդ ուրիշները իրանց փորձով գիտենային, որ խանդոտել կարող է ազգասէրի կինը նոյնպէս, որպէս և դաւաճանը:

Արտասանելով այս խօսքերը, Տանկֆելլան յաղթանակող, սպանիչ հայեացք նետեց՝ մէջքով շուտ եկած լեզի Վաչինգտոնի վրայ: Սակայն ինքն էլ կտաւի պէս գունատուեց ստացած և հարիւրապատիկ վերադարձրած հարուածից:

Համիլտոնը ձեռքը երեսին մօտեցրեց ժպիտը թագցնելու համար և կամացուկ հազաց, իսկ Վաչինգտոնը, բուխարու մօտ հանգիստ կանգնած, լրջօրէն ասաց.—Դուք մոռանում էք, միսս Տանկֆելլա, որ դեռ չէք ասել ինձ, թէ ինչով կարող եմ ծառայել ձեզ: Անկարելի բան է, որ դուք հետաքրքրուէիք կապիտան Բրիւստերով, որը մասնել է ուրիշներին... ձեր բարեկամներին և կողմնակի կերպով հէնց ձեզ: Ինչ որ վերաբերում է նրանց, ափսոս որ ազատ են մնում և մեզ անյայտ: Իսկ եթէ դուք կարող էք ապացուցանել, որ նրանք լրտեսներ ու ազգային գործի թշնամիներ չեն, ձեր հայրը իսկոյն ազատուած կը լինի: Թայլ տուէք ինձ մի հարց առաջարկել ձեզ, ի՞նչու էք դուք նրանց ազնիւ մարդ համարում:

—Որովհետեւ... որովհետեւ... նրանք ջենտլմէններ են:

—Շատ լրտեսներ են եղել, որոնք և լաւ ծագումից են եղել, ե՛ւ փայլուն ընդունակութիւնների տէր.—նկատեց տխրութեամբ Վաչինգտոնը,—բայց գուցէ ունիք և ուրիշ, աւելի հաստատ առիթներ այդպէս կարծելու:

—Որովհետեւ նրանք խօսում էին բացառապէս ինձ հետ,—պտտասխանեց միսս Բլուսմը, բանկելով,—որովհետեւ... նրանք գերադասում էին ինձ հետ մենակ մնալու... որովհետեւ նրանք քաղաքականութեան մասին չէ որ խօսում էին... այլ նրա մասին... ինչի մասին միշտ խօսում են երիտասարդ տղամարդիկ գեղեցիկ աղջիկների հետ... բարձրին ես միայն մէկ անգամ եմ տեսել... և նա... դեհ, հաստատ գիտեմ, որ լրտեսներ չեն:

—Պէտք է ձեզնից այլ եւս մի երկու բան հարցնեմ,—արտասանեց Վաչինգտոնը մտերմութեամբ—և նախազգուշացնում եմ ձեզ, որ եթէ դուք հաւատացած էք ձեր խօսքերի ճշմարտութեան մէջ, ձեր ցուցմունքը, ինչ էլ որ լինի նա, չէ կարող

մեասել այդ ջենտլմեններին, իսկ ձեր հօրը կարող է ազատել բանտից: Բարենհաճեցէք պատմել իմ դիւանապետին, գնդապետ Համիլտօնին նրանց նշանները. կապիտան Բրիւստերը, ձեզ յայտնի պատճառներով, չէր կարող այդ անել:

Տանկֆելլան մի բոպէ տատանու՞մ էր, բայց յետոյ, բաց, ազնիւ հայեացք նետելով զօրապետի վրայ, մանրամասն նկարագրեց կոմսի արտաքինը: Ինչու սկսեց նրանից, դժուար է ասել, բայց երևի նրա համար աւելի հեշտ էր նրա մասին խօսելը, որովհետև, անցնելով բարձրի նկարագրութեանը, նա սկսեց շատ աւելի անորոշ և շփոթ խօսքեր ասել, սակայն այս չը խանգարեց Համիլտօնին բազմանշան հայեացք ձգել իր իշխանաւորի վրայ, որը կանգնեցրեց նրան ձեռքի մի շարժմունքով:

—Շնորհակալ եմ ձեզնից, միսս Տանկֆելլա,—ասաց նա բոլորովին սառնասիրտ,—երկրորդ ջենտլմենը բարձր...

—Պօմպօզօ,—աւելացրեց հպարտութեամբ դեռահաս աղջիկը:

Պատուհանի մօտ կանգնած տիկինները ծիծաղելով իրար երեսին նայեցին: Համիլտօնը նոյնպէս չը կարողացաւ ժպիտը թաղցնել, բայց զօրապետի դէմքը մնաց առաջուայ սլէս անշարժ:

—Կարո՞ղ եմ ձեզ հարցնել,—շարունակեց նա պատկանանքով,—արդեօք բարձրի առաջարկութիւնները ազնիւ բնաւորութիւն էին կրում, ձեր հայրը զիտէր այդ առաջարկութիւնների մասին և կարո՞ղ էր նրանց պատուով ընդունել միսս Տանկֆելլա Բլոսօմը:

—Հայրս նրան ինձ ներկայացրեց և ուզում էր որ ես հետը սիրալիր վարուեմ: Նա... նա համբուրեց ինձ, իսկ ես ասպտակ տուի նրա դէմքին:

Ասելով այս, Տանկֆելլան ամբողջովին շիկնեց, մի վայրկեանից նա պատրաստ էր ամբողջ կեանքը տալու, միայն թէ յետ անէր իր վերջին խօսքերը: Նրա մեծագոյն զարմանքից, Համիլտօնը բարձրաձայն ծիծաղեց, իսկ տիկինները ուզում էին մօտենալ նրան, բայց Վաշինգտօնը պահեց նրանց հազիւ նկատելի շարժմունքով:

—Այդ ջենտլմեններից մէկը, հաւանական է՝ որ մեզ յայտնի է,—ասաց նա նախկին հանգստութեամբ,—և գուցէ ձեր բնազդը արդարացի լինի: Յամենայն դէպս, հաւատացած եղէք, որ մենք մանրակրկիտ խուզարկութիւններ կանենք, որոնք՝ յոյս ունեւնալ պատուաւոր ելք կունենան ձեր հօր համար:

—Շնորհակալ եմ ձեզնից, ձեր գերտղանցութիւն,—պա-

տասխանեց Տանկֆելլան, դեռ եւս շիկնած իր պարզախօսութիւնը յիշելուց,—այժմ ժամանակ է որ գնամ, արդէն ուշ է, իսկ ճանապարհս մօտիկ չէ:

Որչափ զարմացաւ նա, երբ Վաշինգտօնը մօտեցաւ նրան և, բռնելով ձեռքից, ասաց ժպտերես:

—Եթէ ոչ մի ուրիշ, դո՞նէ հէնց այդ պատճառով դուք պէտք է գիշերէք մեզ մօտ, միսս Տանկֆելլա Բլոսօմ: Մենք դեռ պահպանել ենք վիրգինեան հիւրասիրութեան աւանդութիւնները և այն աստիճան բնակալ ենք, որ հիւրերին բանի ենք պահում մեզ մօտ, ինչքան էլ համեստ լինի այն սեղանը, որ մենք կարող ենք նրանց առաջարկել: Լեզիի Վաշինգտօնը թոյլ չի տայ միսս Տանկֆելլա Բլոսօմին իր տան յարկը թողնել այսօր, չընդունելով իր հիւրասիրութիւնն ու բարի խորհուրդը:

—Միսս Տանկֆելլա Բլոսօմը, պատիւ անելով մեր հրաւերը ընդունելու, կապացուցի, որ հաւատում է մեր՝ իրան օգտաւէտ լինելու ցանկութեանը,—ասաց լեզի Վաշինգտօնը, խոնարհուելով:

Միսս Բլոսօմը շարունակում էր վարանման մէջ կանգնել դռան մօտ Վերջապէս նա զգաց, որ իրան մէկը քնքշաբար զրկում է, և տեսաւ, որ ներկայ եղող տիկիններից մէկը բաց, կարեկցական հայեացքով նայում էր իր աչքերին:

—Սիրելի միսս Տանկֆելլա,—ասաց նա գգուանքով,—թէ եւ ես միայն հիւր եմ լեզի Վաշինգտօնի տանը, բայց թոյլ տուէք ինձ եւս միանալ մեր տանտէրերի հետ և խնդրել ձեզ, որ մնաք: Ես այլանկյի միսս Սկայլերն եմ և պատրաստ եմ օգնել ձեզ, ինչպէս կարող է վկայել գնդապետ Համիլտօնը: Հաւատացէք ինձ, միսս Տանկֆելլա, որ ես հոգուով, մտքով կարեկից եմ ձեզ և կը կամենայի գործով հաստատել այս բանը այսօր երեկոյեան: Դուք կը մնաք այստեղ և մենք ամբողջ գիշեր կը խօսենք խանդոտ կապիտանի անարժան վարմունքի մասին, մի մարդու, որը անկասկած նոյնպէս անարժան է ձեզ, որպէս և իր հայրենիքին:

Չը նայած, որ Տանկֆելլան զզուանք էր զգում դէպի այն կարեկցութիւնը որ իրան ցոյց էին տալիս բոլորովին օտար մարդիկ, նրա սիրտը շարժուեց միսս Սկայլերի քնքոյշ կարեկցութիւնից: Եւ էլ կեանքում առաջին անգամ նա կասկածեց իր անկախութեան գօրեղ ոյժի մէջ, մի ինչ-որ խորհրդաւոր բան մղում էր նրան դէպի այդ օրիորդը, որը մի կողմից այնպիսի ջերմ համակրութիւն էր ցոյց տալիս իրան, միսս կողմից՝ հեղ ախնաճութիւն լեզի Վաշինգտօնին:

—Դուք երեւի մայր ունիք,—հարցրեց Տանկֆելլան, նա-
յելով ուղղակի իր նոր բարեկամի աչքերի մէջ:

Որքան էլ տարօրինակ թուար այս հարցը զօրապետին և
նրա աղիւտանտին, սակայն միսս Սկայլերը կանացի հեռատե-
տութեամբ ասաց.

—Իսկ դուք, սիրելի միսս Տանկֆելլա:

—Ես ոչ,—ասաց միսս Բլոսոմը և քիչ մնաց լաց լինէր:

Այն ժամանակ միսս Սկայլերը արտասուքը աչքերին գըր-
կեց հիւրին և դուրս տարաւ սենեակից: Երբ դուռը փակուեց
նրանց յետեւից, Համիլտօնը նայեց կէս հարցնելով, կէս ժպ-
տալով զօրապետին.

—Եթէ դուք, գնդապետ,—ասաց Վաչինգտօնը լրջօրէն,—

կասկածներին համամիտ էք, աւելորդ է որ յիշեցնեմ ձեզ, որ-
չպի նշանակութիւն ունի այս գործի մէջ ծածկամտութիւնը.
յամենայն դէպս, ոչ մի խօսք չէք ասիլ այստեղ լսածի մասին
այն ջենտլմէնին, որին վերաբերում է այս խնդիրը:

—Ինչպէս կը հրամայէք, գեներալ,—պատասխանեց պատ-
կասանքով Համիլտօնը,—բայց համարձակուում եմ հարցնել, մի-
թէ կարծում էք, որ մի աւելի լուրջ զգացմունք, քան թէ բո-
ւալեական յափշտակութիւն դուրեկան դէմքով...

—Եթէ ես խնդրեցի ձեզ, գնդապետ, զաղտնի պահել այս
գործը,—ընդմիջեց նրան Վաչինգտօնը, մտերմաբար խփելով իր
երիտասարդ աղիւտանտի ուսին,—ուրեմն ի հարկէ, այս բա-
նին ես ծանրակշիռ նշանակութիւն եմ տալիս:

—Ներողութիւն եմ խնդրում ձեր գերազանցութիւնից,—
ասաց պատանին դեռահաս աղջկայ պէս կարմրելով,—ես միայն
ուզում էի...

—Դուք ուզում էիք խնդրել ինձ որ այս երեկոյեան ազա-
տեմ ձեզ հերթապահութիւնից,—կրկին ընդհատեց նրան Վա-
չինգտօնը, բարեմտաբար ժպտալով,—դուք կամենում էք ձեր
ներկայութեամբ հանութիւն պատճառել միսս Սկայլերին ու
նրա հիւրին: Նա շատ թեթեւամիտ աղջիկ է, բայց կարծեմ
ազնիւ է: Սիրալիք եղէք նրա հետ, գնդապետ, բայց միայն չա-
փով, եթէ ոչ մեր ձեռքին կը լինեն երկու խոցուած օրիորդ-
ներ:

Այս խօսքերն ասելով, նա կատակով թափահարեց մատը
և, ուսերից բռնելով երիտասարդին, խնդալով դուրս հրեց նրան
գոնից:

Ամուսնու հետ մենակ մնալով, լեզի Վաչինգտօնը մօտե-
ցաւ նրան և շտապով հարցրեց.

—Դու հօ չես կարծում, որ այս յիմար պատմութեան մէջ
քաղաքական մեքենայութիւն, լուրջ դաւաճանութիւն լինի:

—Ոչ,—պատասխանեց զօրապետը, բուխարու մօտ հանգիստ
ու անշարժ կանգնած:

—Այս միայն մի դատարկ սիրային խաղ է յիմար, ինք-
նասէր գաւառական մի աղջկայ հետ:

—Ներեցէք, միլեդի,—պատասխանեց Վաչինգտօնը լրջօ-
րէն,—դուք դուցէ այս աղջկայ արժէքը չը գիտէք: Սովորական
գաւառական գեղեցկուհին չէր կարողանայ այսպիսի խլրտում
ձգել ամբողջ չըջակալքում: Անկարելի է երաշխաւորել որ իր
ցանցի մէջ չէ բռնել այնպիսի մի նշանաւոր թռչնակին, ինչ-
պիսին ինքը ասում է: Եթէ այս բանը ճշմարիտ է, այն ժամա-
նակ մի հզօր պետութեան հետ դաշնակցութիւն կապելու
գործը շատ առաջ կերթայ:

—Որ այս անպիտանը, կոնեկտիկուտի կապիտանի սիրու-
հին, մարդու գնայ... Այդ անկարելի է, այդ անհեթեթ բան է,
—բացականչեց լեզի Վաչինգտօնը զայրացած և շտապով դուրս
գնաց սենեակից, մենակ թողնելով մեծ մարդուն, ինչպէս որ
միշտ լինում է մեծ մարդկանց հետ:

Այդ միջոցին միսս Սկայլերը այնպիսի աջողութեամբ
մխիթարում էր Տանկֆելլային, որ շուտով սա ցամաքեցրեց իր
արտասուալից աչքերը և նոր բարեկամուհու օգնութեամբ կար-
գի բերեց իր քրքրուած չքեղ մազերը:

—Չարժէ աւելի մտածել դաւաճան կապիտանի մասին,
սիրելի միսս Տանկֆելլա,—ասում էր միսս Սկայլերը.—տեսէք,
ինչպէս ձեր երեսին կը սազի նոր սանրուածքը: Նիւ-Եօրկի և
Ֆիլադելֆիայի բոլոր գեղեցկուհիք այժմ մազերը ուղիղ և հարթ
են սանրում ծոծրակի վրայ:

Երբ մի քանի բոպէից երկու դեռահաս աղջիկները ներքեւ-
իջան ընդունարանը, Համիլտօնը զարմացած մնաց նրանց դու-
րալի դէմքերի ու հագուստների արտասովոր թարմութեան և
լուսաճաճանչ փայլի վրայ:

—Գուցէ սա գերադասէր առանձնութեան մէջ ողբալ,
քան թէ երեւալ հասարակութեան մէջ,—ասաց նա, մի կողմ
տանելով միսս Սկայլերին:

—Դատարկ բաներ են: Միթէ դեռահաս աղջիկը պէտք է
լաց լինի ու գլուխը սպանի, որ իրան դաւաճանել է յիմարին
մէկը:

—Բայց հայրը բանտի մէջ է:

—Նայեցէք իմ աչքերին,—ասաց միսս Սկայլերը կռուի
հրաւիրող ժպտով,—և համարձակուեցէք մէկ ասել, որ նրան

վաղն և ևթ ազատ չեն թողնի: Միթէ դուք կարծում էք որ ևս չը հասկացայ ձեր հայեացքը և գեներալի դէմքի արտայայտութիւնը:

—Սակայն, թանկագին միսս Սկայլեր,—սկսեց Համիլտօնը, բայց դեռահաս աղջիկը ընդմիջեց նրան:

—Ես արդէն այդպէս էլ յայտարարել եմ իրան, թէն չեմ ասել պատճառը: Բայց ափսոս, այս ձեզ համար լաւ դաս կը լինէր ինձանից մի բան թաղցնելու ցանկութեան համար:

Այս սպանիչ հարուածը տալով երիտասարդ գնդապետին, միսս Սկայլերը մօտեցաւ Տանկֆելլային, որ կանգնած էր պատուհանի մօտ և աչքը չէր հեռացնում լուսնակով լուսաւորուած գետափից: Ամերիկական զարուհը այնպիսի յանկարծակի քմահաճոյքներ ունի, որ վերջին ժամերի ընթացքում տեղի էր ունեցել անսպասելի, զարմանալի փոփոխութիւն: Անձրեր դադարել էր և գետինը ծածկուել էր սառուցի բարակ շերտով ու լուսնակի ցոլքի շողջաջող ձիւնով: Հիւսիս-արեւելեան քամին բոլոր ծառերն ու թփերը դարձրել էր արծաթազօծ շթաքարերստալակախոններ:

—Հիանալի տեսարան է,—ասաց, մօտենալով տիկիններին, միջին հասակի, բարետիրտ դէմքով մի տղամարդ,—բայց Աստուած տայ, որ շուտով տաք գարուն անի: Լուսնակը սիրուն փայլում է երկնակամարի վրայ, բայց բազմաթիւ թշուառներ ցրտից դողում են բանակում, կտաւէ վրաների մէջ: Եթէ դուք տեսած լինէիք, ինչպէս երեկ երեկոյեան անպիտան կօնեկտիկուայիք ատամներն էին սրում զօրապետի վրայ, թէն չէին համարձակուում ուղղակի գլուխ բարձրացնել նրա դէմ, եթէ դուք տեսած լինէիք այդ անհաւատարիմ Թոլմաններին, որոնք վստահութիւն չեն ընծայում իրանց գեներալին և պատրաստեն հայրենիքին դաւաճանելու միայն նրա համար, որ վատ եղանակ է կանգնած,—դուք ջերմաջերմ կաղաչէիք Աստուծուն, որ այդ մարդկանց սրտերն էլ այնպէս հալուէին, ինչպէս նրանց չրջապատող սառած գետինն է հալում: Այլ ևս երկու շաբաթ այսպիսի ցրտեր անեն—մեր մէջ կը երեւայ ոչ թէ մէկ Ալլան Բրիւստեր, այլ տասնեակ անբաւական լակոսներ, որոնք յօժար կաւքով իրանց գլուխը զինուորական դատաստանին են մատնում:

—Այո, գեներալ Սուլլուան, հիանալի դիչեր է,—ասաց Համիլտօնը, իր իշխանաւորի կողքը բրթելով և ճարպիկութեամբ խօսքը փոխելով,—այսօր դժուար չի լինի մեր ուրուականը բռնել: Պէտք է գիտենաք,—չարունակեց նա, դիմելով իր խօսքերով շահագրգռուած տիկիններին,—որ բանակում և այս ամ-

բողջ չրջակայքում գիչերներով մի ուրուական է ման գալիս դորը թիկնոցը հագին: Երեսը չի երեւում, ծածկուած է բարձր օձիքով: Նա խուլ ձայնով ասում է պայմանաբառը (պարօլ) և պահապանները թողնում են որ անցնի, չը գիտենալով՝ ով է: Ասում են, նա միշտ երեւում է վտանգի բողբոջին, թշնամու յարձակումից կամ ուրիշ՝ զօրքին սպառնացող փորձանքից առաջ, այնպէս որ շատերը նրան մեր սուրը գործի բարի ոգին կամ պահապան-հրեշտակն են համարում: Կօնեկտիկուտի կամաւոր գնդի խոովութիւնից առաջ ուրուականը անց ու դարձ էր անում բանակով և երեւի տեսնում էր թէ ինչպէս երկչոտները պատրաստուում էին սպրտամբուելու մեր վաշխնգտօնից, որի երեսին համարձակուեցին զանգատուել իրանց մանր-մունր զրգոնութիւնները մէջ բերելով:

Այստեղ Համիլտօնին, իր կարգին, շտապ նշանով կանգնեցրեց միսս Սկայլերը, և նա լռեց, չը վերջացնելով իր պատմութիւնը:

Տանկֆելլան չէր կարող չը նկատել Սուլլուանի և Համիլտօնի արած ակնարկները իր անհաւատարիմ երկրպագուի մասին, բայց նրա սրտի մէջ ետում էր միայն խոցուած հպարտութիւնը, ոչ թէ սէրը: Սկզբում զայրոյթը վաշխնգտօնի դէմ, որ Բրիւստերին ու իր հօրը ձեռքակալել էր, իսկ յետոյ կապիտանի դաւաճանութեան բացուելը ամենեւին ջնջեցին աղջկայ սրտից ամեն քնքոյշ զգացմունք գէպի Բրիւստերը: Նա մինչև անգամ մոռացաւ, որ մի ժամանակ սէր էր տածում գէպի կապիտանը: այժմ նա զգում էր իր սրտի մէջ կատարեալ դատարկութիւն: Նրան թուում էր, թէ անցնալում ոչ թէ ինքն էր ապրում, այլ մի ուրիշ Տանկֆելլա Բլոսօմը, որը յաւիտեան կորաւ ձիւնի և մրրիկի մէջ: Զգում էր, որ վերջին քսան և չորս ժամուայ մէջ ինքը ուրիշ կին է դառել կամ, լաւ է ասեմ, որ միայն նոր է կլին դառել:

Սակայն, տարօրինակ բան էր, նրա շփոթութիւնը աւելի ևս սաստկացաւ, երբ խօսքը անցաւ մայր Վան-Յանգտի վրայ: Տենդային հետաքրքրութեամբ, ամօթով և երկիւղով ականջ էր դնում, ինչպէս մայրին անվերջ գովում էին նրա քաջութեան, ազգասիրութեան և անձնական փայլուն յատկութիւնների համար: Մի բողբոջ նրա գլխով անցաւ մի վայրենի միտք՝ միսս Սկայլերի վզով ընկնել ու խոստովանուել մայրին հասցրած հարուածի մէջ, բայց նա վախենում էր, չը լինի թէ միսս Սկայլերը իր դադանիքը հազորդի Համիլտօնին, մի բան, որ, ի հարկէ, դուք չէր գայ Վան-Յանգտին: «Եւ էլ,—մտածում էր նա,—մայրը պէտք է հասկանայ, եթէ միայն այնպիսի նշանաւոր մարդ է, ինչպէս նրա մասին ասում են, որ ևս ինքս ինձ մո-

ուսացայ անսպասելի դժբախտութիւնից և անձամբ ոչ մի վատու-
թիւն չէի կամենում իրանս: Այսօրինակ, զուտ կանացի տրա-
մաբանութեամբ նա մի քիչ հանգստացրեց իր ազնիւ, փոքրիկ
սրտի խայթերը:

Բայց այս հանգստութիւնը միայն ժամանակաւոր էր. ամ-
բողջ գիշեր նա չէր կարող աչքը փակել: Բոլոր դիւրազգաց
բնաւորութիւնների պէս, նա ափսոսանքով և յուսահատութեամբ
մտքումը քննում էր այն, ինչ որ անկարելի էր արդէն վերա-
դարձնել: Նա հասկանում էր իր՝ այստեղ երևալու ամբողջ ան-
մատութիւնը, երբ արդէն անկարելի էր այս բանը ուղղել. նա
նախատում էր իրան իր անվայել ու անսիրտ վարմունքի հա-
մար մայօր Վան-Յանդտի հետ, երբ արդէն ուշ էր և վիրաւո-
րանքը արդէն հասցրած էր: Մահճակալի մէջ պառկած, մտայն
սենեակում, որտեղ նրա կողքին հանգիստ քնած էր միսս Սկայ-
լերը, նա չէր կարող արտասուքը զսպել և վերջապէս, վեր թըռ-
չելով, անխելի քայլերով մօտ վազեց պատուհանին, որտեղից
բացուում էր գետափի տեսարանը: Լուսնեակը արծաթաղօծ
փայլով շողչողում էր, արտայտելով թարմ, անբիծ ձիւնի և
պահապանի սուրբի վրայ. պահապանի տեսքը մի քիչ հանգըս-
տացրեց աղջկան: Բայց եթէ քնել չէ կարողանում, ինչու դուրս
չը գնայ մաքուր օդ ծծելու: Նա սովոր էր չըջել իր ազարա-
կում ցերեկուայ ու գիշերուայ ամեն ժամին և ինչ եղանակ էլ
լինէր: Յիշեց, որ մէկ անգամ, դուրս գալով գիշերը սաստիկ
մրրկի ժամանակ, կորուստից փրկեց մատաղ հորթին, որը յայտ-
նի չէ թէ ինչպէս՝ ընկել էր մեծ ճանապարհի վրայ: Նա կա-
մայուկ հագնուեց, ձգեց ուսերի վրայ միսս Սկայլերի թիկնոցը,
անխելի քայլերով իջաւ սանդուխով, անցաւ քնած ծառայի
մօտից և, բաց անելով դրսի դուռը, գնաց ձիւնապատ դաշ-
տակով:

Բայց նա մի բան չէր նախատեսել—խաղաղ ազարակի և
և պատերազմական բանակի տարբերութիւնը: Մի քանի քայլ
հազիւ էր արել, որ պահապան զինուորը ճանապարհը կտրեց,
և, նրա կրծքին կպցնելով սուրինը, կանչեց.

—Կնց:

Ամբողջ արիւնը ընկաւ դեռահաս աղջկայ գլուխը—կեանս-
քի մէջ առաջին անգամն էր, որ լսում էր մի այգպիտի կտրա-
կան հրաման. սակայն նա կանգնեց և լուռ, բայց համարձակ
մտիկ տուեց զինուորին.

—Ո՞վ է գալիս,—ասաց զինուորը, չ'իջեցնելով հրացանը:

—Տանկֆելլա Բլոսօմ,—պատասխանեց հպարտ-հպարտ
Մօրիստաունի գեղեցիկուհին:

—Անցիր, Բրիստոս քեզ հետ,—ասաց պահապանը, հրա-
ցանով պատիւ տալով, և առաջ, քան թէ շուարած աղջիկը կա-
րողացաւ ուշքի գալ, նա արդէն առաջուայ պէս անց ու դարձ
էր անում յետ ու առաջ՝ լուսնեակով լուսաւորուած ձիւնի վը-
րայով:

Իսպառ իրան հաշիւ չը տալով, երազի մէջ թէ արթուն
ժամանակն էր կատարում այս տարօրինակ տեսարանը, Տանկ-
ֆելլան շարունակեց գնալ դէպի արևը: Գետի եզրերին կապել
էր սառուցի բարակ շերտը, որի մէջտեղով գլորում էր ջրի
մուգ զանգուածը: Նա գիտէր, որ հեռու չէր բանակը, որտեղ
կալանաւորուած էր Բրիւստերը, և յանկարծ աղջիկը ուզեց
տեսնել նրան և ուղղակի երեսին չպրտել ստոր դաւաճանու-
թեան մեղադրանքը, բայց նրան պահեց մի ինչ-որ բնազդային
կասկածանք իր ոյժերից և նա մտախոհ կանգ առաւ արիւն:
Յանկարծ նրա ոտները դողացին և արիւնը սառաւ նրա ալ այ-
տերին:

Բանակի կողմից կամաց շարժում էր մի բարձրահասակ
կերպարանք գորշ թիկնոցը հագին, դէմքը կիսով չափ ծած-
կուած: Տանկֆելլան յիշեց այն ուրուականի մասին, որ այցելում
էր դօրքը, և շուտը կտրեց: Նրա փոքրիկ, արի սրտիկը, որը
չը դողաց պահապանի սուրինի առջև, այժմ անհանդիստ բաբա-
խեց խորհրդաւոր տեսիլքը նկատելով: Նա կարողացաւ թագ-
նուել ծառի յետեւում, և ուրուականը կամաց, վեհ քայլուած-
քով մօտից անցաւ, չը նկատելով նրան: Չը նայելով իր երկիւ-
ղին, նա, այնուամենայնիւ, շինականի գործնական բնազդով
նկատեց, որ ձիւնը ճարձատում էր ուրուականի ոտների տակ
և ձիւնի վրայ հետքեր էին մնում զինուորական կօշիկներից:

Տանկֆելլայի այտերը նորից ալ կտրուեցին և նա իրան
յատուկ համարձակութեամբ հետեւեց ուրուականին, թագնուե-
լով նրանից ծառերի յետեւում: Վերջապէս ուրուականը կանգ
առաւ մի դածրիկ, ձիգ սրահի մօտ, բաց արեց դռնակը և ներս
մտաւ: Մի քանի րոպէից միևնոյն կերպարանքը դուրս եկաւ
սրահից, բայց այս անգամ առանց գորշ թիկնոցի: Ամեն ինչ
մոռանալով և կամենալով միայն խաբեբայի դիմակը պատուել,
աներկիւղ աղջիկը նրա ճանապարհը կտրեց: Ուրուականը կա-
մաց բարձրացրեց գլուխը և նայեց նրա վրայ: Լուսնեակը պայ-
ծառ լուսաւորեց զօրապետի հանգիստ, լրջմիտ դէմքը:

Տանկֆելլան այն աստիճան շփոթուեց, որ լուռ խոնար-
հեց, պուտի պէս կարմրելով: Ուրուականի դէմքը անշարժ
մնաց:

—Ուշ էք զբօսնում, միսս Բլոսօմ,—ասաց նա ծնողական

հողատարութեամբ,—երկիւղ եմ կրում, որ քիչ արգելքներէ պատահած չէք լինի մեր բանակի մէջ ձեր զբօսանքի ժամանակ Օրինակ, թէկուզ այս պահապանը կարող էր ձեզ կանգնեցնել:

—Օ՛ր, միք անհանգստանալ, ձեր գերազանցութիւն,—պատասխանեց շտապով Տանկֆելլան,—նա հարցրեց, ով է գալիս, ես իմ անունս ասացի և նա շատ քաղաքավարի կերպով հետացաւ:

Մի ուրախ ժպիտ երեւաց Վաշինգտօնի լրջմիտ դէմքի վրայ:

—Լաւ ճարպիկ կերպով էք օգտուել զուարճախօսութիւնիցս, ասաց նա,—այսօր, ձեր այցելութեան պատուին, ես պայմանաբառ (պարօլ) տուի—Տանկֆելլա Բլօսօմ:

Աղջկայ աչքերէն արասուք երեւաց, չրթունքները դողացին և նա կարողացաւ միայն պատասխանել:

—Օ՛ր, ձեր գերազանցութիւն:

—Ուրեմն դուք անցաք պահապանի մօտից,—չարունակեց Վաշինգտօնը, սուր հայեացք նետելով նրա վրայ, և նրա շագանակազոյն աչքերի մէջ անհանգստութեան ստուեր ցոլաց:

—Դուք, երեւի զբօսնում էիք գետափին: Թէն ինքս էլ երբեմն գիշերով դուրս եմ գալիս մաքուր օդ ծծելու, բայց երբէք չեմ գնում այս սրահից հեռու, իսկ դեռահաս աղջկայ համար պահապանների գծից դէնն անցնելը շատ վտանգաւոր է:

—Ես ոչ ոքի չը պատահեցի, ձեր գերազանցութիւն—շտապով, կեանքում առաջին անգամ, սուտ խօսեց ճշմարտախօս աղջիկը:

—Եւ ոչ ոքի չը տեսաք,—հանգիստ հարցրեց Վաշինգտօնը:

—Ոչ ոքի,—պատասխանեց Տանկֆելլան:

Երկուսն էլ իրար նայեցին, աղջիկը, որը դուրէ ամենաճշմարտախօս կինն էր անգլիական գաղութների մէջ, և նա, որ ճշմարտութեան այլաբանական նշան է Ամերիկայում: Երկուսն էլ հասկանում էին, որ սուտ են խօսում և հաւանական է, խորին կերպով իրար յարգում էին այս բանի համար:

—Շատ ուրախ եմ, որ լսում եմ այդ, միսս Տանկֆելլա,—ասաց Վաշինգտօնը, բոլորովին չայլայլուելով,—ձեր կողմից շատ բնական կը լինէր տեսակցութիւն որոնել ձեզ դաւաճանած երկրպագուի հետ, բայց այս փորձը շատ անխոհեմ և անիրագործելի բան կը լինէր:

—Ես չեմ էլ մտածել դրա մասին, ձեր գերազանցութիւն, բայց եթէ թոյլ տայիք մի քանի րոպէով տեսնուել կապիտան Բրիւստերի հետ, ինձ մեծ երախտիք արած կը լինէիք:

—Այժմ այդ անկարելի է,—պատասխանեց զօրապետը մտախոհ,—բայց մի երկու օրից նրան կուղարկեն Մօրիստաուն գլխուորական դատարանը և ճանապարհին պահապանները կը կանգնեն հանգստանալու Բլօսօմի ազարակում: Կապիտանին ուղևորող սպան ձեզ յարմարութիւն կը տայ նրա հետ խօսելու: Ես կարող եմ նոյնպէս խոստանալ ձեզ, միսս Տանկֆելլա, որ մինչև այդ ժամանակ ձեր հայրը ազատ կը լինի:

Այդ րոպէին նրանք մտնում էին գլխաւոր գիւանատան հաշտը: Տանկֆելլան բռնեց Վաշինգտօնի ձեռքը, որ սա մեկնել էր նրան ողջունելու համար, և համբուրեց:

—Դուք այնպէս բարի էք,—բացականչեց նա դողօջուն ձայնով,—իսկ ես այնպէս յիմար եմ, այնպէս զգուելի: Ուրեմն դուք հաւատացիք իմ պատմածին և այն ջենտլմենները ճշմարիտ որ ոչ թէ լրտեսներ դուրս եկան, այլ հէնց այն ազնիւ մարդիկ, որոնց տեղ իրանց ներկայացնում էին:

—Դեհ, այդ ես չասացի,—արտասանեց ժպտալով Վաշինգտօնը:—Աւելի լաւ է՝ ասացէք ինձ, միսս Տանկֆելլա, ձեր ծանօթութիւնը բարօնի հետ վերջացաւ միայն ապտակով թէ՛ այլ եւս մի բան տեղի ունեցաւ այնուհետեւ:

—Նա ինձ խնդրում էր գնալ հետը Բասկինըիլ և ես խոստացայ—պատասխանեց Տանկֆելլան հազիւ լսելի ձայնով:

—Եթէ չեմ սխալուում, միսս Բլօսօմ, դուք առանց առանձին զոհարարութեան խօսք կը տաք ինձ չը տեսնուելու նրա հետ, մինչև որ ձեզ թոյլ չը տամ,—ասաց Վաշինգտօնը ժրպտալով:

—Խօսք եմ տալիս,—պատասխանեց կամաց դեռահաս աղջիկը, նետելով զօրապետի վրայ իր սեւորակ աչքերի պայծառ հայեացքը:

—Իսկ այժմ մնաք բարով,—ասաց Վաշինգտօնը քաղաքավարի ողջոյնով:

—Մնաք բարով, ձեր գերազանցութիւն:

IV

Արեւ արդէն բարձր էր կանգնած, երբ միւս առաւօտ միսս Բլօսօմը իր յոգնած, փրփրոտած ձին կանգնացրեց ագարակի դարպասի առջեւ: Երբէք նա այնպէս գեղեցիկ չէր եղել, որպէս այդ րոպէին. նկատելի շփոթութիւնը միայն աւերացորպէս այդ րոպէին. նկատելի շփոթութիւնը միայն աւերացնում էր նրա սիրունութիւնը: Ծանապարհին նա կազմել էր մի ամբողջ ճառ, որ պէտք է ասէր մայօր Վան Յանդտին, բայց անբողջ ճառ, որ պէտք է ասէր մայօր Վան Յանդտին, երբ ներողութեան բոլոր բառերը մարեցին նրա չրթունքներին, երբ

տեսաւ երիտասարդ սպային, որը պատկառանքով դիմաւորեց նրան: Սակայն աղջիկը թոյլ տուեց որ օգնէ իրան վայր թռչել ձիուց, և ասաց, քաշուելուց կարմրելով:

—Շնորհակալ եմ:

Աւելի ոչինչ չը կարողացաւ նա ասել և շտապով փախաւ իր սենեակը:

Ամբողջ այդ օրուայ ընթացքում մայօրը ամենայն կերպ խոյս էր տալիս Տանկֆելլայից, իսկ երբ նրանք պատահմամբ հանդիպում էին իրար, դեռահաս աղջիկը, նայելով նրա վրայ ճակատի տակից, նկատում էր որ նա աչքը չէր հեռացնում իրանից: Փոքր առ փոքր Տանկֆելլան սկսեց հետեւել նրա օրինակին և, նոյնպէս աննկատելի կերպով դիտելով նրա բոլոր շարժումները, լուռ խոնարհում էր նրան հանդիպելիս: Այսպէս շարունակւում էր մինչեւ յաջորդ օրուայ երեկոն, երբ գլխաւոր զօրաբանակից ազարակն եկաւ մի սուրհանդակ և հանեց մայօրին անյարմար դրութիւնից: Եւ յետո՛ւ Վան-Յանդտի համար վերին աստիճանի ծանր էր ապուշ, անբան կենդանու դեր խաղալ:

Զօրապետից պաշտօնական ծրար ստանալով, մայօրը բաղխեց միս Տանկֆելլայի գուռը: Աղջիկը բաց արեց նկատելի շփոթութեամբ:

—Ներեցէք ինձ, միսս Տանկֆելլա Բլոսօմ,—ասաց նա լրջօրէն,—բայց ես ձեր անունով նամակ եմ ստացել գլխաւոր զօրաբանակից: Յոյս ունեմ, սրա մէջ ձեզ համար ախորժելի լուրեր կը գտնէք հօր ազատութեան և իմ այստեղից հեռանալու մասին: Հաւատացէք, որ այս լրտեսութիւնը նոյնչափ զգուշելի է ինձ համար, որչափ և ձեզ համար:

Երբ նա սենեակը մտաւ, Տանկֆելլան նորից կամենում էր ներողութիւն խնդրել նրանից, բայց նրա խօսքերից յետոյ լուռ բարձրացրեց աչքերն և յորդ արտասուքներ հոսեցին նրա այտերով:

Մայօրը բռնեց Տանկֆելլայի փոքրիկ, սառն ձեռքը և աղջիկը հեծկտալով բացատրեց հազիւ լսելի կցկտուր ձայնով, որ շատ ժամանակ է ուղղում էր ներողութիւն խնդրել նրանից իր կողմից, յանդուգն վարմունքի համար, բայց որ նա, մայօրը, ոչ մի կերպ իրան չէր թողնում այս անելու:

—Սիրելի միսս Տանկֆելլա,—բացականչեց մայօրը զարմացած,—եթէ ես խոյս էի տալիս ձեզնից, պատճառն միայն այն էր, որ վախենում էի անախորժութիւն պատճառել իմ ներկայութեամբ: Հաւատացնում եմ ձեզ, յարգելի միսս Տանկֆելլա, ես...

—Տեսնելով, որ դուք դիտմամբ էք ձեզ հեռու պահում

սեղանատանից, որտեղ ես դրադուած եմ լինում, որպէս զի միայն թոյլ չը տաք որ ձեզանից ներողութիւն խնդրեմ, ես մտածում էի, որ դուք ինձ ատում էք և գերադասում էք...

—Գուցէ այդ նամակը մի քիչ կը հանգստացնի, միսս Տանկֆելլա,—ասաց մայօրը, ցոյց տալով այն ծրարի վրայ, որը բռնած ունէր աղջիկը ձեռքն ատանց բանալու:

Տանկֆելլան կարմրեց, մտածելով իր ցրուածութեան մասին և, բանալով նամակը, կարդաց հետեւեալը:

«Զօրապետը մեծ հաճութեամբ հաղորդում է միսս Տանկֆելլա Բլոսօմին, որ նրա հօր վրայ բարձած մեղադրանքը, մանրամասն հետախուզութիւնից յետոյ, անհիմն կրեւաց: Զօրապետը նոյնպէս հաղորդում է միսս Տանկֆելլային, որ այն ջենտլմէնի իսկական անունը, որը իրան յայտնի էր բարօն Պօմպօզօի անունան տակ, Գօն Ժուան Մօրալիս է և նա Վպանական տան արտակարգ դեսպան է, իսկ միւս ջենտլմէնը, որը իրան յայտնի էր Կոմս Ֆերդինանտի անունան տակ,—Վպանական դեսպանութեան քարտուղար, սինեօր Գօզոյն է: Զօրապետը պարտք է համարում աւելացնելու, որ միսս Տանկֆելլա Բլոսօմը այլ եւս առիթ չի ունենայ հիւրասիրութիւն ցոյց տալու այս ջենտլմէններին, որովհետեւ այսօր առաւօտեան, դժբախտաբար, նորին գերազանցութիւնն Վպանական դեսպանութեան միւս անդամները, ամենայն հաւանականութեամբ, անմիջապէս կը վերադառնան հայրենիք: Վերջապէս, զօրապետը իր քաղցր պարտականութիւնն է համարում վկայելու միսս Տանկֆելլա Բլոսօմի ճշմարտախօսութիւնը, խոհմութիւնն ու զգուշութիւնը:

Նորին գերազանցութիւն գններալ Վալինդտօնի հրամանով, քարտուղար Ալեքսանդր Համիլտօն»:

Մի քանի րոպէ Տանկֆելլան լուռ էր, յետոյ սուր հայեացքով նայեց մայօրի վրայ: Այս հայեացքը բաւական էր, որպէս զի համոզուէր, որ երիտասարդ սպան կատարելապէս ոչինչ չը դիտէր այն դասի մասին, որ ստացել էր ինքը իր անյադ ինքնասիրութեան և թեթեւամտութեան չնորհիւ:

—Սիրելի միսս Տանկֆելլա,—ասաց մայօրը, տեսնելով նրա շփոթութիւնը,—կարծում էի, այս համբաւը ուրախ համբաւ է: Ինձ ասաց սերժանտը...

—Ի՞նչ,—հարցրեց Տանկֆելլան, աչքերը նրան բեւեռելով:

—Որ քսան և չորս ժամից յետոյ ձեր հայրը ազատ կը լինի և ինձ էլ կազատեն...

—Գիտեմ որ ձանձրացել էք այստեղ մնալուց,—ընդմիջեց

Նրան զեռանաս աղջիկը դառն ժպիտով,—ուրախացէք, ձեր տեղեկութիւնները ճիշտ են, հայրս ազատուած է ամենայն մեղադրանքից, և թէ... և թէ միայն այս նամակը կեղծ չէ... և թէ զեներալ Վաչինգտօնը որեւէ ուրիշ անձնաւորութիւն չէ, զուք մայօր Վան-Յանգտը չէք, և...

Նրա ձայնը կտրուեց և նա թագցրեց իր կարմրատակած արտասուելից դէմքը պատուհանի վարագոյրների մէջ:

«Ենդճ աղջիկ,—մտածեց մայօրը,—վշտից խելքը կորցրել է: Ի՞նչ յիմար էի որ բարկանում էի սրա վրայ ինձ հասցրած վիրաւորանքի համար: Սա անգիտակցարար է գործում... աւելի լաւ է մենակ թողնեմ»:

Նա շտապով դիմեց դէպի դուռը, բայց յանկարծ վարագոյրի յետեւից լսուեց կանացի ձայն.

—Հեռանում էք, չը ներելով ինձ:

—Ներել ձեզ, միսս Տանկֆելլա,—բացականչեց մայօրը, մօտ վազելով վարագոյրին և բռնելով նրա տակից մեկնած ձեռքը:—Ոչ, ես պէտք է ներողութիւն խնդրեմ ձեզանից իմ յիմարութեան, իմ անմտութեան համար:

Չը նայելով որ Վան-Յանգտը յայտնի էր՝ տիկիններին հաճոյախօսութիւններ ասելու վարպետութեամբ, նա յանկարծ լռեց և բաւականանում էր նրանով, որ ամուր սեղմում էր զեռանաս աղջկայ ձեռքը, որի մէջ այժմ արդէն զգացում էին ջերմութիւն և կեանք: Վերջապէս Տանկֆելլան կամայով ազատեց իր ձեռքը և, շնորհակալութիւն յայտնելով մայօրին, որ իրան ներել է, նորից ծածկուեց վարագոյրի յետեւում:

Երբ երիտասարդը սենեակից հեռացաւ, նա ընկաւ բազկաթոռի մէջ և սկսեց աղի արտասուքներ թափել: Վերջին քսան և չորս ժամուայ մէջ նրա հպարտութեանն ու ինքնավրաստան անկախութեանը ծանր հարուած էր հասցրած: Կեանքի մէջ առաջին անգամն էր զգում իրան յաղթահարուած: Կեղծ բարօնի մահը նրա մէջ իսկապէս միայն ամիսսանք արծարծեց, թէ ինչու չի կարող ապացուցանել ամբողջ աշխարհին (որը այժմ Տանկֆելլայի համար գլխաւոր դիւանատան և մայօր Վան-Յանգտի մէջն էր), որ բարօնը լրջօրէն էր սիրահարուած իրան և որ իր ձեռքն առաջարկելով՝ իրանից հանդիսաւոր մերժում էր ստացել: Աղջիկը բոլորովին չէր կասկածում, որ իր հայրը շահասիրութիւնից դրդուած՝ հակամիտ կը լինէր այս խաբեքայութեանը: Այսպիսով մի օրուայ մէջ՝ սիրուած մարդը, բարեկամն ու հայրը դաւաճանել էին իրան, և կարեկցութիւն էին ցոյց տուել միայն այն մարդիկ, որոնց ինքը վիրաւորել էր առանց որեւէ պատճառի:

Երկար լաց եղաւ խեղճ Տանկֆելլան, իր փոքրիկ սաները խաչաձեւ ծալած ու հասարակ շինական աղջկայ պէս մի կողմից միւսը տարուբերելով: Բայց պատանեկութեան մէջ յեղաշրջումը շատ արագ է կատարուում, և մի երկու ժամից նա արդէն ուրախ-ուրախ խօսում էր անասունների բալում իր սիրելի կովի հետ, առանց որեւէ առթի յանդիմանեց նեղր Յեսարին և տուն վերադարձաւ խորին կերպով խոցուած հրեշտակի դէմքով, որը հիասթափուել է աշխարհը վերատեսողելու իր ցանկութիւնից, բայց այնուամենայնիւ պատրաստ է ներել չար մարդկանց: Տեսնելով նրան այսպիսի տրամադրութեան մէջ, մայօրը խղճի խայթ զգաց և մեծ ճանապարհով դնաց իր վերգինեան ծխամուրճը ծխելու, իսկ Տանկֆելլան վաղ պառկեց քնելու և նորից լաց եղաւ, մինչեւ որ քունը խփեց նրա կարմրած աչքերը: Բնութիւնը, ըստ երևույթին, հետեւեց նրա օրինակին, որովհետեւ արեւամուտին տաք արեց, արագահոս վտակները քաղցրահնչիւն կարկաչեցին, իսկ ծառերն ու թուփերը ծածկուեցին կենդանարար խոնավութեամբ:

Միւս օր, մայիսի 3-ին, ամերիկական կլիմայի մոգական փոփոխականութեամբ, որ մանաւանդ աչքի էր ընկնում այդ պատմական անմոռանալի գարնանը, ջերմ, իսկ յունիսեան արեւը լուսաւորեց Ջերսէի լեռների մերկացած լանջերը: Յուրտ, դեռ ոչ բոլորովին հալուած գետինը խոժոռադէմ պատասխանեց այս լուսաճաճանչ համբոյրին և միայն զեղնաւուն ուռենիները մի տեսակ յանկարծ կանաչեցին գետափին: Բայց գարունը վերջապէս եկել էր. ամենքի համար այս պարզ էր, և մինչեւ անգամ վայելուչ, համեստափայլ մայօր Վան-Յանգտը գլխապատառ ներս ընկաւ միսս Տանկֆելլայի սենեակը նրան մի մեծ հրաշք աւետելու համար.—նրա զինուորներից մէկը դաշտում մանուշակ էր գտել: Մի բուսեցից յետոյ զեռանաս աղջիկը, թիկնոց գցելով ուսերի վրայ, վազեց անսպասելի, ուրախալի տեսարանով գուարճանալու: Բնական է, որ մայօրը հետեւեց նրան: Մոռանալով բոլոր իրանց մէջ պատահած անախորժութիւնները, նրանք ուրախ-ուրախ կոխկրտում էին ոտներով կանաչ դալարը: Այսպէս սաստիկ է ազդում գարունը ամեն կենդանի արարածի վրայ:

Բայց մանուշակները որտեղ որ թագ էին կացել: Չը նայելով որ վրայի շորը նոր էր, իսկ խոտը թաց, Տանկֆելլան չոքեց և ձեռներով քրքրում էր չոր տերեւները, յոյս ունենալով նրանց տակ ծաղիկներ գտնելու: Մայօրը, ծառին յննուելով, հիացմունքով դիտում էր նրան.

—Դուք այդպէս երբէք ծաղիկ չէք գտնի,—ասաց զեռա-

հաս աղջիկը անհամբերութեամբ.— Իբրեւ ազնիւ մարդ, դուք պէտք է չդէք։ Կան բաներ, որոնց համար կարելի է խոնարհել։

Մայորը հնազանդուեց, բայց հէնց այդ բոպէին Տանկֆելլըն, մի քանի մանուշակ գտնելով, արագ վեր թռաւ ու կանգնեց։

—Սպասեցէք,—ասաց նա նենգաւոր ժպիտը երեսին, ծաղիկներից մէկը անցկացնելով երիտասարդի բաճկոնի կոճկատեղի մէջ,—ահա ձեզ իմ յանդուգն վարմունքիս համար։ Այժմ վեր կացէք։

Բայց մայորը վեր չէր կենում։ Նա բռնեց Տանկֆելլայի երկու ձեռներէն ու, նայելով ուղղակի նրա աչքերի մէջ, արտասանեց։

—Թոյլ տուէ՛ք՝ կրկնեմ ձեր խօսքերը, որ կան բաներ, որոնց համար կարելի է խոնարհուել։ Նայեցէ՛ք ողորմածաբար, միսս Տանկֆելլա, իմ սիրոյս վրայ, որը այս ծաղիկի պէս...

—Բացուել է մի գիշերուայ մէջ,—ընդմիջեց նրան ծիծաղելով միսս Բլոսոմը.— ոչ, մայոր, վեր կացէ՛ք, ինչ կ'ասէին Մօրիստաունի գեղեցկուհիները, իմանալով, որ դուք ծնկաչոք կանգնած էք գաւառացի մի աղջկայ առջև, որին ծաղր ու ծանակ են անում բոլոր ջենտլմէնները։ Ի՞նչ կ'ասէր միսս Բօլդօնը, լսելով, որ իր երկրպագուն, փայլուն մայոր Վան-Յանդաը հր սէրն է յայտնում մի աղջկան, որին թողել է ստորաբարչ դաւաճանը։ Թողէ՛ք ինձ, մայոր, եթէ ինձ յարգում էք...

Մի վայրկեանից նա ազատ էր և աւելացրեց արտասուքից դողդոջող ձայնով։

—Վեր կացէ՛ք, մայոր։ Մոռացէ՛ք այս ամենը։ Ներեցէ՛ք ինձ, եթէ ես կրկին կոպիտ վարուեցի ձեզ հետ։

Մայորը ուղում էր վեր կենալ, բայց չէր կարողանում. բանն այն է, որ ճահճի մէջ էր ընկել և դանդաղ սկսել էր խորասուզուել։ Տանկֆելլան սկզբում ուրախ ծիծաղեց և մայորը ընկերակցում էր այս ծիծաղին, թէև նրա դէմքը կարմրել էր ճահճից դուրս պրծնելու զուր ջանքերից, բայց յետոյ աղջիկը օարսափահար նետուեց նրա վրայ և թեւերով գրկեց նրա վիզը։

—Թողէ՛ք, թողէ՛ք ինձ, ի սէր Աստուծու, միսս Բլոսոմ,—բացականչեց նա շտապով,—եթէ ոչ, դուք էլ կ'ընկնէք միևնոյն յիմար փորձանքի մէջ։

Գործնական աղջիկը մի քանի քայլ յետ ցատկեց և, կրթնելով ժայռին, ասաց։

—Հանեցէ՛ք ձեր գօտին, մէկ ծայրը կապեցէ՛ք ձեր քամարից, իսկ միւսը ինձ ձգեցէ՛ք։

Նա հնազանդուեց, աղջիկը իր բոլոր ջիղերը լարեց և սկսեց ամբողջ ոյժով քաշել։

Մի քանի բոպէից յետոյ մայորը հաստատ հողի վրայ էր։ Տանկֆելլան նորից ծիծաղեց, բայց իսկոյն լսեց և սկսեց տերեւներով, թաշկինակով և իր թիկնոցի փէշերով սրբել խեղճ մայորի վրայ ծեփուած ցեխը։ Սա լուս էր և կարմրում էր ամօթից ու հաճութիւնից։

Ազարակը վերադառնալիս, նրանք քիչ էին խօսում։ Տանկֆելլան խիստ լուրջ էր։ Բայց արեւը ուրախ լուսաւորում էր երկնքում, ընտրիւնը ցնծում էր նոր յարուցած կեանքով, թեթեւ զովիկը շնչում էր մօտեցող ամառուայ վարդագոյն յոյսերի մասին։ Գեոահաս աղջիկն ու մայորը հաճութեամբ և երկիրով հասկանում էին, որ իրանց մէջ տեղի է ունեցել անսպասելի փոփոխութիւն և որ իրանք այժմ արդէն այն էակները չեն, ինչ որ էին կէս ժամ առաջ։

Սակայն իր տան դռան մօտ Տանկֆելլան իրան յատուկ համարձակութեամբ, մայորին տուեց գօտին, որը իր ձեռքում էր մնացել, և ասաց ժպտալով։

—Կան բաներ, մայոր Վան-Յանդա, որոնց համար արժէ խոնարհել։

Բայց նա չէր սպասում, որ մայորը այնքան համարձակ կը լինի, որ հէնց այն բոպէին, երբ ինքը փախչել էր ուղում, կը բռնի իր երկու ձեռներից և իրան կը համբուրի։ Աղջիկը ազնուաբար ընդդիմադրում էր, բայց նրան աւելի վախեցնում էին իր սեփական զգայմունքները, քան թէ նրա ոյժը։ Մի վայրկեանից ինքը մայորը, կարծես իր համարձակութիւնից վախեցած, ապատեց նրան և Տանկֆելլան աներեւոյթացաւ իր սենեակում, որտեղ մի ամբողջ ժամ պառկած էր մահճակալի մէջ սաստիկ յուղուած։

«Նա այլ ևս երբէք չը պէտք է ինձ համբուրի,—ասում էր նա ինքն իրան,—եթէ ոչ՝ կը մեռնեմ, թէ որ միշտ նրա համբոյրները չը զգամ, այլ ևս երբէք չեմ համբուրի մէկ ուրիշին»։

Յանկարծ սանդուխի վրայ ոտնաձայն լսուեց, որ այնպէս լաւ ծանօթ էր նրան և արդէն թանկ էր նրա սրտին։ Աղջիկը դուռը բաց արեց և շէմքին երեւաց մայորը այն աստիճան գունատուած, որ նորից նրա դէմքին երեւան եկաւ այն հարուածի կարմիր գիծը, որ երկու օր առաջ ստացել էր։ Տեսնելով նրան, Տանկֆելլան կտաւի պէս գունատուեց և լուռ, անթարթ աչքերով նայում էր նրան։

—Այս բոլորէն,—ասաց սպան,—ազարակը հաւաւ դրա-
գունների մի վաշտ, որը տանում է կալանաւոր կապիտան Ալ-
լան Բրիւստերին Մօրիստաուն՝ դաւաճանութեան և ապստամ-
բութեան համար զինուորական զատաստանին յանձնելու:
Գնդապետ Համիլտօնը, իմ անունով ուղղած մի մամու-
ւոր նամակի մէջ, յանձնարարում է ինձ անձնական տեսակ-
ցութիւն գլուխ բերել ձեր և կալանաւորի մէջ, եթէ դուք այդ
կամենում էք:

Տանկֆելլան, որպէս ճշմարիտ կին, հասկացաւ որ Համիլ-
տօնի նամակի մէջ ասուած էր նոյնպէս և կապիտան Բրիւս-
տերի հետ ունեցած իր յարաբերութիւնների մասին: Բայց նա
այնուամենայնիւ հպարտութեամբ գլուխը բարձրացրեց և, նայե-
լով ուղղակի մայրի աչքերին, ասաց:

—Ես այդ կամենում եմ:

—Ձեր կամքը կատարուած կը լինի, միսս Բլոսօմ,—ասաց
սպան սառն քաղաքավարութեամբ և շուտ գալով՝ ուղում էր
հեռանալ:

—Սպասեցէք մի բոլոր, մայր Վան-Յանդտ,—բացական-
չեց շապով Տանկֆելլան,—ես չէի կամենայ, որ այդ տեսակ-
ցութիւնը տեղի ունենար այն տան մէջ... որտեղ ապրում է
իմ հայրս: Դաշտում, այստեղից ոչ հեռու, գոմ է գտնուում, որի
առջև բարձրանում է մի վայրենի թղենի: Նա գիտէ այն տեղը:
Ասացէք, որ ես այնտեղ կը սպասեմ նրան կէս ժամից յետոյ:

—Կեանքիս մէջ առաջին անգամն է,—ասաց մայրը հեղ-
նական ժպիտով,—որ ինձ վիճակուած է սիրային տեսակցու-
թեան նպաստել, բայց հաւատացէք, միսս Տանկֆելլա, որ կա-
նեմ ամեն բան, ինչ որ ինձանից կախուած է: Կէս ժամից յե-
տոյ ձեզ մօտ կը բերեմ կալանաւորին:

Կէս ժամ անցաւ և ճշտապահ միսս Բլոսօմը դնաց տեսակ-
ցութեան նշանակուած տեղը: Մէկ ժամից յետոյ Յեղարը յայտ-
նեց մայրին, որ Տանկֆելլան նրան իր մօտ է ինդրում: Մը-
նելով հիւրատուն, մայրը շուտով մնաց. դեռահաս աղջիկը
պատկած էր բազմոցի վրայ գունատ, անշարժ: Բայց երբ սպան
գուրը ձածկեց իր յետևից, նա վեր թաւ ու մօտեցաւ նրան:

—Ձը գիտեմ, արդեօք յայտնի է ձեզ,—ասաց նա,—որ այն
մարդը, որին ես այս է հրաժեշտ տուի, բարեկամական յարա-
բերութիւնների մէջ էր ինձ հետ մէկ ամբողջ տարի ինձ
թաւում էր: Թէ սիրուած եմ նրան, և հաւատարիմ էի նրան, բայց
նա դաւաճանից ինձ և մատնեց իմ երկու բարեկամներին, իր-
բեւ լրտեսներին: Ես այս կը ներէի նրան, եթէ նա այս պէս վա-
րուած լինէր անմիտ խանդաութիւնից զրգուած, բայց, որ-

պէս նա այս բոլորէն ինձ խոստովանուեց, նրան զրգում էր ա-
տելութիւնը դէպի զօրապետ և նա յոյս ունէր այդ երկու ջեն-
տրլէնների ձեռքակալութեամբ մեծ շփոթութիւն ձգել ամե-
րիկական զօրքի մէջ և այսպիսով իր անձնական նպատակներին
հասնել: Նա այս ամենը ինձ բացատրեց, կարծելով, որ ես հա-
մակրում եմ իր ատելութեանը դէպի զօրապետ ու խղճում
եմ իրան, որպէս անսիրտ բռնակալութեան զոհին: Խոստովան-
ւում եմ—և ամօթից գետինն եմ մտնում,—որ երկու օր արա-
նից առաջ ես նրան հաւատում էի և ձեզ բռնակալի դահիճ էի
համարում: Հարկ չը կայ որ բացատրեմ ձեզ, մայր, որ ծանօ-
թանալով զօրապետի հետ, փոխեցի կարծիքս—դուք լաւ էք ճա-
նաչում ձեր գնեցարկին: Բայց ինչու յանդիմանէի կապիտան
Բրիւստերին դաւաճանութեան համար, չէ որ զգում էի,
որ գոյութիւն ունի և մի այլ պատճառ, որով չեմ կարող այլ
եւս նրան սիրել:

Մայրը կամենում էր աւելի մօտենալ դեռահաս աղջկան,
բայց սա հեռացրեց նրան ձեռքով և տաք-տաք շարունակեց.

—Նա դառնութեամբ նախատում էր ինձ, որ չեմ կարեկ-
ցում իր աղետալի վիճակին, յիշեցրեց իմ երդումներս, յոյց
տուեց նամակներս ու աւելացրեց, որ եթէ շարունակուած եմ
իրան սիրել, պէտք է օգնեմ իրան: Ես պատասխանեցի, որ եթէ
երբէք այլ եւս չի խօսի սիրոյս մասին, կը հրաժարուի իր ու-
նեցած բոլոր իրաւունքներից իմ վրայ, խօսք կը տայ, որ եր-
բէք չի տեսնուի ինձ հետ և կը վերադարձնի իմ նամակները,
այն ժամանակ ես նրան կօգնեմ:

Աղջիկը կանգ առաւ. արիւնը խփեց նրա գունատ դէմքը:

—Ձը մոռանաք, մայր,—շարունակեց նա,—որ երբ ես
համաձայնուեցի այդ մարդու սէրը բաժանել, ես ջանիլ էի,
միամիտ և վստահացող: Իսկ այժմ ես նրա միտքն ու հողին
լաւ եմ տեսնում: Ես չը սխալուեցի—նա ընդունեց իմ առա-
ջարկութիւնը:

—Շուն, բայց ինչպէս կարող էիք դուք օգնել այդ կրկ-
նակի դաւաճանին:

—Ես նրան օգնեցի,—պատասխանեց հագիստ կերպով
Տանկֆելլան:

—Բայց ինչպէս:

—Դառնալով ինքն դաւաճան,—բացականչեց միսս Բլոսօմը
վայրագ ողևորութեամբ.—մինչև որ դուք անց ու դարձ էիք
անում մեր տան սենեակներում, իսկ ձեր զինուորները ծիծա-
ղում էին մեծ ճանապարհի վրայ, Յեղարը թամբեց իմ շառատ
ձին, ամենասրբնթացը ամբողջ շրջակայքում: Նա արդէն եր-

կու մղոն հեռու է այստեղից, և կապիտան Բրիւստերը պաննում է նրա վրայ: Ի՞նչու դուք չէք յուսահատուում, մայօր: Նայեցէք ինձ վրայ, ես դաւաճան եմ, և ահա ի՞նչով գնեց նա իմ օգնութիւնը:

Այս խօսքերն ասելով՝ նա ծոցից դուրս քաշեց նամակները մի կապոց ու նետեց սեղանի վրայ: Նա սպասում էր որ մայօրը բարկութիւնից կը բռնկի, և ապշեց նրա սառն լուծիւնից:

— Ի՞նչու լուում էք, — բացականչեց նա սրտոտ, — խօսեցէք, անիծեցէք ինձ: Հրամայեցէք ինձ ձեռքակալել: Ես ինձ յանցաւոր եմ ճանաչում և կը փրկեմ ձեր պատիւը: Միայն թէ միք լռիլ, ի սէր Աստուծոյ, միք լռիլ:

— Թոյլ տուէք հարցնեմ, — ասաց սառնութեամբ մայօրը, — ինչու համար դուք ինձ երկու անգամ արժանացրիք այսպիսի ծանր հարուածների:

— Որովհետեւ սիրում եմ ձեզ, որովհետեւ, տեսնելով ձեզ, ես իսկոյն հասկացայ, որ դուք էք իմ հրամանատարը, և իմ հպարտութիւնը ապստամբուեց: Որովհետեւ, համոզուելով որ չեմ կարող չը սիրել ձեզ, ես հասկացայ որ առաջ երբէք չեմ սիրել, և որոշեցի մի հարուածով վերջ գնել իմ ամբողջ անցեալին: Որովհետեւ չէի ուզում, որ գոյութիւն ունենար սիրոյ գոնէ մի խօսք՝ ուրիշ մարդուն իմ ձեռքով գրուած:

— Միտ Տանկֆելլա, — ասաց մայօրը, տխրութեամբ նայելով դեռահաս աղջկան, — կարծեմ բաւականին պարզ ցոյց տուի ձեզ, որպիսի զօրեղ աղջկեցութիւն ունիք դուք իմ վրայ, և դուք դուր էք աշխատում մխիթարել ինձ սիրոյ խոստովանանքով: Եթէ դուք ճշմարիտ սիրէիք ինձ, չէիք անել այն, ինչ որ պիտի յաւիտեան բաժանի մեզ: Եթէ դուք ճշմարիտ սիրէիք ինձ, ձեր կանացի սիրտը կը թելադրէր ձեզ, ինչ է տղամարդը պատուի օրէնք համարում: Եթէ այդ դաւաճանը, իմ կալանաւորը և մի ժամանակ ձեր սիրած մարդը փախած լինէր նոյն իսկ առանց ձեր օժանդակութեան և գործակցութեան, ես պարտքս կը համարէի թողնել ձեզ, եթէ նոյնիսկ կանգնած լինէի ձեզ հետ սուրբ սեղանի առաջ, և կ'ընկնէի նրա յետեւից:

Տանկֆելլան լսում էր նրան լուռ ու հաղիւ շունչ քաշելով, բայց գրեթէ չը հասկացաւ պատուի նրա այս խիստ պատճառաբանութիւնը, իր յիշողութեան մէջ բեւեռուած կցկտուր խօսքերից նա եզրափակեց միայն, որ մայօրը իրան ատում է և որ ինքը սպանել է նրա մէջ ամենայն սէր:

— Եթէ դուք տարօրինակ բան էք համարում, — շարունակեց

սպան, — որ ես այժմ ժամանակ եմ կորցնում դատարկարանութեան վրայ, փոխարէն ձեր սիրեկանին հալածելու, իմացէք, որ ձեզ համար եմ այս անուամբ կամենում եմ, որ ձեր տեսակցութեան ու նրա փախուստի մէջ փոքր ինչ ժամանակ անցնի, և այսպիսով կը փրկեմ ձեզ ամենայն կասկածանքից: Միք վախենալ, — աւելացրեց նա տխուր ժպիտը դէմքին, տեսնելով որ Տանկֆելլան ուզում է իր կողմը նետուել, — ես ոչքնչով ինձ վտանգի չեմ ենթարկում: Նա չէ կարող հեռու փախչել: Մի քանի մղոն բանակի շուրջը կանգնեցրած են պահնորդներ: Նա բաց թողւթ չունի անցնելու համար, իսկ նրա անձնաւորութիւնն ու յանցանքը ամենքին յայտնի են:

— Այն, — պատասխանեց Տանկֆելլան շտապով, — բայց նրա գունդը պահնորդ է պահում Բասկինըրիջի ճանապարհի վրայ:

— Ո՞րտեղից գիտէք այդ — հարցրեց մայօրը բռնելով նրա ձեռքից:

— Ինքն ինձ ասաց:

Առաջ քան Տանկֆելլան կարողացաւ մայօրի ոտներն ընկնել ու ներում ինդրել, մայօրը դուրս վազեց միտ սենեակը և, հրաման տալով հերթապահ զինուորին... վերադարձաւ կարմրած դէմքով ու փայլող աչքերով:

— Լսեցէք ինձ, — բացականչեց նա, բռնելով դեռահաս աղջկայ երկու ձեռքից, — դուք չը գիտէք, ինչ էք արել: Ես ձեզ ներում եմ, բայց նրան բռնելը արդէն ոչ թէ իմ պարտականութիւնն է, այլ իմ անձնական պատիւը: Ես մենակ եմ ճանապարհ ընկնում նրան հասնելու և կը բերեմ նրան կամ երբէք չեմ վերադառնայ: Մ'նաք բարով: Աստուած ձեզ հետ:

Բայց առաջ քան նա հասաւ դռանը, Տանկֆելլան կանգնեցրեց նրան:

— Ասացէք այլ եւս մէկ անգամ, որ ինձ ներել էք:

— Այն, ներել եմ:

— Հերդ, — բացականչեց դեռահաս աղջիկը, և նրա ձայնի մէջ մի ինչ-որ առանձին բան լսուեց, որ ստիպեց երեսը շուռ տալ մայօրին, որը առաջին անգամ լսեց իր անունը նրա բերանից, — ես սուտ խօսեցի, որ նա փախաւ մեր ախոռատան ամենալաւ ձիով: Երկրորդ բաժանմունքում դուք կը գտնէք չէկ մատակ ձին, որը աւելի արագավազ է:

— Օրհնուիք դուք Աստուծով:

Այս խօսքերն ասելով մայօրը աներևութացաւ: Աղջիկը տեղից չէր շարժուում, մինչև որ մեծ ճանապարհի վրայ ձիու ոտնաձայն լսուեց, բայց երբ մի քանի բոպէից յետոյ Յեսարը սենեակը մտաւ կապիտան Բրիւստերի փախուստի մասին հա-

դորդելու համար, սենեակում ոչ ոք կար: Նրա յետեւից դռնով ներս խուժեցին կատաղած զինուորները:

— Ի հարկէ, այստեղ չի լինի,— բացականչեց սերժանտ Տիբեթաքը— անիծուածը փախել է իր կապիտանի հետ:

— Այդպէս էլ է, աստուածունից երկու ձի է անհետացել, բացի մայօրի ձիուց,— աներացրեց զինուոր Հիկսը:

Այս կարծիքի հետ լիովին համաձայն էին և զլխաւոր դիւանատանը, ուր միւս օր լուր տարածուեց, թէ Տանկֆելլա Բլոսօմը աղատել է իր սիրեկանին և հետք փախել:

— Փառք Աստուծու, աղատուեցինք այդ դաւաճանից,— սուսաց գններալ Սուլիւանը,— զոնէ չենք տեսնիլ սպային նուատացնող դատը: Բայց շատ ափսոս խեղճ մայօր Վան-Յանդալը:

— Իսկ ինչ համբաւ կայ մայօրի մասին,— հարցրեց շտապով Վալինդտօնը:

— Նա հալածել է փախստականին մինչև Սպրինգֆիլդ, սպանել է իր տակի ձին և ինքը անզգայ ընկել է մայօր Մերտօնի բնակարանի առջև: Նրան իսկոյն անկողին են դրել և մի քանի ժամից յետոյ բժիշկը յայտնել է, որ ծաղիկ է ընկել:

Սարապի ու ափսոսանքի մրմունջ անցաւ ներկայ եղողների մէջ:

— Այլ ևս մի քաջ զինուոր զոհ ընկաւ սոսկալի հիւանդութեան,— արտասանեց Սուլիւանը,— ինչո՞վ պիտի այս վերջանայ:

— Մենակ Աստուած գիտէ,— պատասխանեց Համիլտօնը,— բայց որտեղ է խեղճ Վան-Յանդալը Հիւանդանոցում:

— Ոչ, Նրան տեղափոխել են Բլոսօմի աղարակը, որտեղ կարանտին է հաստատուած: Աքներ Բլոսօմը խոհեմորար հետացել է իր տնից, իսկ աղջիկը փախել: Հիւանդին մտիկ է տալիս նեղր-ծառան ու մի ինչ-որ անձոնի պառաւ կին, այնպէս որ եթէ մայօրը առաջանայ, միսս Բոլտօնը խանդոտելու պատճառ չի ունենայ:

V

Անձոնի պառաւը, որի մասին ասուած էր նախորդ գլխի մէջ, մի օր կանգնած էր պատուհանի առջև այն սենեակում, որը մի ժամանակ Տանկֆելլա Բլոսօմի ննջարանն էր: Նա անշարժ նայում էր իր առջև փռուած ամառային տեսարանին: Եւ իբրև, ամառը հասել էր անսպասելի կերպով, քաղցր գեփուօք մեղմ նուում էր ծառերի կանաչ թաղարթի մէջ, թռչնակները ուրախ երգում էին, քաղցր անուշահոտութիւնը քնում էր օդը:

Աղարակը այնպիսի խնդացող, ծաղկաւէտ տեսք էր ստացել, որ նայելով վայրի խաղողի որթով պատած հին տանը, դժուար թէ կարելի լինէր հաւատալ, որ դեռ քիչ ժամանակ առաջ դետինը ծածկուած էր ձիւնով, իսկ տանիքներից կախ էին ընկած սառցէ լուլաները:

— Տանկֆելլա,— արտասանեց մի թոյլ, դողդոջուն ձայն:

Անձոնի պառաւը շուռ եկաւ: Դա Տանկֆելլա Բլոսօմն էր, որին գունատութիւնը աւելի ևս գեղեցկացնում էր:

— Մօտեցիր ինձ, իմ աչքի լոյս:

Դեռահաս աղջիկը մօտեցաւ բազմոցին, որի վրայ պառկած էր առողջացող մայօր Վան-Յանդալը:

— Ասա ինձ, իմ ուրախութիւն,— շարունակեց նա, առնելով աղջկայ ձեռքը,— երբ դու պսակուում էիր ինձ հետ, որպէս զի, ինչպէս բացատրեցիր պատօրին, իրաւունք ունենաս ինձ մտիկ տալու հիւանդութեանս ժամանակ, մտածել էիր արդեօք, որ եթէ կենդանի էլ մնամ, կարող եմ կատարեալ այլանդակ դառնալ:

— Մտածել էի, և հէնց դրա համար պսակուեցի,— պատասխանեց Տանկֆելլան հեղնական ժպիտը շրթունքներին,— գիտէի, որ մէկը հպարտութիւնից ու ազնուութիւնից դրդած չէր կատարի այն խոստումը, որը տուել էր մի խեղճ ջահիլ աղջկան:

— Իսկ դու մտածել էիր,— ընդհատեց մայօրը, համբուրելուր նրա ձեռքը,— որ կարող էր աւելի վաթարը պատահել,— ևս կարող էի բժշկուել, իսկ դու հիւանդանալ, և քո հրապուրիչ դէմքը...

— Դրա մասին էլ մտածել էք:

— Ի՞նչ կ'անէիր այն ժամանակ:

— Կը մեռնէի:

— Բայց ինչպէս:

— Մի որ և է կերպով: Սակայն դու դեռ չը պէտք է այդքան շատ խօսես: Երեսդ պատին արա և աշխատիր քնել:

— Իսկ դիտես, իմ աչքիս լոյս, ինչ էին ինձ միշտ չընջում թռչնակներն ու ծառերը, երբ դէս ու դէն էի ընկնում զառանցանքի մէջ:

— Ո՛չ:

— Տանկֆելլա Բլոսօմ, Տանկֆելլա Բլոսօմ:

— Իսկ դու գիտես, սիրելիս, ևս ինչ ասացի ինձ, ծնկաչոք ընկնելով քո առջև և անդին գլուխդ բարձրացնելիս, երբ դու ձիուց վայր ընկար Սպրինգֆիլդում, որտեղ ես քեզ հասայ:

— Ո՛չ:

—Աշխարհիս երեսին կան բաներ, որոնց համար արժէ
խոնարհել: Եւ կռանալով նա սիրաբորբոք համբուրեց հիւան-
դին:

Նրանք բախտաւոր ապրեցին մինչև խորին ծերութիւնը,
բայց սպան առաջ վախճանուեց: Մայրս տեսել է Տանկֆելլային
դեռ 1833 թուին, և բարեսիրտ պառաւը այնպիսի մանրամաս-
նութիւններ էր պատմում իր ունեցած տեսակցութեան մասին
Վաշինգտոնի հետ, որ ես չը վստահացայ այստեղ յիշատակել:
Նա հաւատացնում էր, որ սպանական դեսպանը իր փեսայուն
էր, իր համար հարուստ օժիտ էր պատրաստել և մեռել էր
հարսանիքի նախընթաց օրը: Առում են, նա երբեմն իբրև
զաղտնիք մինչև անդամ հաղորդում էր բարեկամներին՝ թէ
ծածուկ պատկուած է եղել դեսպանի հետ: Առհասարակ նրա
պատմածների մէջ մայօր Վան-Յանդտը մի տեսակ էր քաշում
յետին տեղը և այս պատճառով այս էջերի վրայ ես նրան յատ-
կացրի առաջին տեղը: Ինչ որ վերաբերում է Ալլան Բրիւտե-
րին, նա յաջողութեամբ հասաւ Կօնեկտիկուտ և հաշտութիւնը
կապելուց յետոյ՝ վեհաժողովի անդամ ընտրուեց իր համերկրա-
ցիներէից, որոնք նրա անհամաձայնութիւնները զօրապետի հետ
բացատրում էին ազգասիրական, թէև մի քիչ վաղաժամ ընդ-
դիմադրութեամբ զաշխակցութեան սկզբունքին:



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]



« Ազգային գրադարան

NL0166802

